Ազգ
Azg
12 ՓԵՏՐՈՒԱՐ 2013 ԵՐԵՔՇԱԲԹԻ 16(5099)
ISSN: 1829-1651

# Զարաֆօղլուն համերաշխության կոչ է անում Թուրքիայի եւ Ադրբեջանի հասարակայնությանը

## *Կանխելու համար ադրբեջանցի գրող Այլիսլիի հնարավոր սպանությունը*

**Հ. ՉԱՔՐՅԱՆ**

**Հայտնի թուրք մտավորական, հրատարակիչ Ռագըփ Զարաֆօղլուի կոչը փետրվարի 10-ին հրապարակվել է Ստամբուլի «Հայթերթ» կայքէջում: Կոչն արվել է ի պաշտպանություն Աքրամ Այլիսլիի: Վերջին շրջանում ադրբեջանցի գրողի անունը, ինչպես նաեւ նրա «Քարե երազներ» վիպակը հաճախ են հիշատակվել մեր թերթում: Ուստի եւ նպատակահարմար ենք գտնում առանց նախաբանի որոշ կրճատումներով ներկայացնել Զարաֆօղլուի «Անհետաձգելի կոչը»:**

**Ահա թե ինչ է ասում մեր հասարակությանը քաջ հայտնի թուրք մտավորականը.**

**«Խիղճը մարդկության ամենակարեւոր արժանիքներից է: Ինչպես էլ անվանելու լինենք խղճմտանքի տեր մարդկանց՝ ազնիվ կամ ճշմարտախոս, օրերից մի օր նրանք են դառնալու ժողովրդի ու երկրի արժանապատվությունը, այլ ոչ թե կացնահարողները: Այս պահին մահվան լուրջ սպառնալիքի տակ է մի գրող, որն իրականում Ադրբեջանի արժանապատվությունը պիտի համարվեր:**

**Հասկանալի է, որ սպառնալիքի աղբյուրը հենց հետխորհրդային ավտորիտար նախագահն է: Հետ են վերցնում գրողի «ժողովրդական» կոչումն ու պետական մրցանակը, նրան զրկում են պետության հոգածությունից ու թոշակից, գործից են ազատում նաեւ նրա տիկնոջն ու որդուն: Աքրամ Այլիսլին այն գրողներից է, որը ժողովուրդների եղբայրության փիլիսոփայությունը յուրացրել է Մոսկվայի «Մաքսիմ Գորկի» ինստիտուտում, ստեղծագործել է եւ դրամատուրգ: Նա 75 տարեկան է: 2005-ին ընտրվել էր պատգամավոր: Գրականության ասպարեզ է իջել 1959-ին, եւ նրա պիեսները բեմադրվել են խորհրդային երկրի բազմաթիվ քաղաքներում՝ Երեւանը ներառյալ:** *Տես էջ 5*

# «Հայաստան. ազգի ցեղասպանություն եւ եկեղեցու ստալինյան հետապնդում»

**Փետրվարի 14-16-ը Զիգենի համալսարանում կաթոլիկ եւ ավետարանական եկեղեցու աստվածաբանները հրավիրում են «Բռնություն քրիստոնյաների հանդեպ. ձեւերը, պատճառները, հիմնապատճառները» վերնագրյալ սիմպոզիումին: Քննության առարկա են դառնալու քրիստոնյաների հանդեպ անցյալում եւ ներկայում իրականացված հետապնդումները:**

**«Ցեղասպանության ճանաչման աշխատանքային հանձնախմբի» տարածած լրատվության համաձայն, դոկտոր Թեսսա Հոֆմանը «Հայաստան. ազգի ցեղասպանություն եւ եկեղեցու՝ ստալինյան հետապնդում» թեմայով Workshop կանցկացնի:**

**ԱՆ. Հ.**
**Գերմանիա**

# Ջոն Հեֆերն. «Պետքարտուղար Քերրին հայ-թուրքական հարաբերությունների մասով կշարունակի հետեւել քաղաքական նույն գծին»



**- Պարոն դեսպան, նախ շնորհակալություն հարցազրույցի համար: Ինչպե՞ս եք Ձեզ զգում Հայաստանում:**

- Լրացավ մեկ տարի, ինչ մենք Հայաստանում ենք: Այդ մեկ տարին կբնութագրեի հոյակապ ժամանակաշրջան: Ես եւ տիկինս՝ Լիբին, մեծ հաճույքով հանդիպել եւ ծանոթացել ենք հայերի հետ, ծանոթացել հայկական հյուրասիրությանը, Հայաստանի տեսարժան վայրերին, մասնակցել ենք մեղրի, խորովածի եւ գինու փառատոներին: Իսկ մասնագիտական առումով՝ շատ հաճելի է, երբ գտնվում ես մի երկրում, որը անցումային փուլում է: Հայաստանը խոր ներքին հարեւանություն ունի, կան ներքին մարտահրավերներ, եւ այդ ամենի հետ քայլեր են ձեռնարկվում երկիրը ճիշտ ուղղությամբ տանելու համար, եւ կան մարդիկ, ովքեր լծված են այդ աշխատանքին: Մեր աշխատանքի հետաքրքրական մասն էլ այն է, որ մենք կարողանում ենք գտնել եւ համագործակցել այդպիսի մարդկանց հետ:

**- Որպես սովորական քաղաքացի ինչպիսի խնդիրներ եք տեսել Հայաստանում, որոնք կցանկանայիք լուծված տեսնել:**

- Հայաստանում շատ մարտահրավերներ կան, սակայն մի խնդիր կա, որ առնչվում է բազմաթիվ ոլորտների: Դա մրցակցությունն է: Կարծում եմ՝ Հայաստանի նման երկրի համար, որ խորհրդային ժառանգություն ունի, կարեւոր է քաղաքական, տնտեսական, կոմերցիոն մրցակցություն ստեղծելը: Եվ մրցակցությունը կարող է շատ մեծ օգուտ բերել հայ ժողովրդին:

**- Տարեվերջին Դուք եւ Ձեր տիկինը ԱՄՆ-ում հանդիպումներ եք ունեցել հայ համայնքի հետ: Ի՞նչ խնդիրներ ու հարցեր են քննարկվել:**

*Տես էջ 4*

# Հայրիկյանական տրագիկոմեդիայի ավարտը. ընտրությունները չեն հետաձգվի



**Հունվարի 31-ին ներքաղաքական կյանքում սկսվեց թատերական մի ներկայացում, որի համահեղինակը դարձավ ՀՀ նախագահի թեկնածու, ԱԻՄ առաջնորդ Պարույր Հայրիկյանը: Թե ո՞վ է մահափորձի պատվիրատուն եւ ինչո՞ւ գնդակն ուղղվեց Հայրիկյանի աջ ուսին՝ փորձում են պարզել իրավապահ մարմինները: Այստեղ հետաքրքրականն այլեւ. ինչպե՞ս կարողացավ Հայրիկյանն իր դեմ կատարված մահափորձը դարձնել համընդհանուր քննարկման առարկա: Երբ Հայրիկյանը հիվանդանոցում էր, կատարվածի վերաբերյալ լռջությունն ու ուշադրությունը հասել էր գագաթնակետին: Սակայն Հայրիկյանի անդադար հարցազրույցները կասկածի տեղիք տվեցին: Ինչպե՞ս մարդը, որ հրազենային վնասվածք է ստացել, վիրահատվել, կարողանում է վիրահատությունից մի քանի ժամ անց զրուցել լրագրողների հետ: Հայրիկյանը մանրամասն նկարագրում էր, թե ինչպես են իր վրա կրակել ու մարդասպանն ինչ դիմագիծ ուներ:**

**Մահափորձից շոու սարքելու հայրիկյանական մտադրությունները բարձրակետում էին, երբ իր փաստաբանի ասուլիսին հայտնվեց վիրավոր թեկնածուն եւ իր համակիրների ծափողջույնների ներքո հայտարարեց, որ իր դեմ մահափորձը կազմակերպել են «ռուսական իմպերիալիզմի» հետեւորդները: Սակայն նրանց մտադրությունը չհաջողվեց: Հայրիկյանը չի դիմի Սահմանադրական դատարան եւ ընտրությունները չեն հետաձգվի: Այս հայտարարությունից երկու օր էր անցել, երբ Հայրիկյանի շտաբից «Ազգ»-ին հայտնեցին, որ չեն բացառում Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելը: Շուրջ երկու օր Հայրիկյանի շտաբից իրարամերժ հայտարարություններ էին հնչում՝ մեկ Հայրիկյանը դիմում էր ՍԴ, մեկ հրաժարվում, մեկ սպասում էր փաստաբանին, եւ այդպես շարունակ: Մինչ Սահմանադրական դատարան դիմելը Հայրիկյանը հայտարարություն տարածեց՝ ուղղված Րաֆֆի Հովհաննիսյանին եւ Հրանտ Բագրատյանին:**

*Տես էջ 3*

***ՌԱԿ-ՖՐԱՆՍԻԱ***

# Դէպի ապահով Հայաստան՝ Սերժ Սարգսեանի գլխաւորութեամբ

***Սփյուռքում գործող Ռամկավար Ազատական կուսակցության տարբեր կառույցները տարբեր երկրներում այս օրերին զորակցության ու համերաշխության միջոցառումներ են կազմակերպում՝ ի նպաստ ՀՀ գործող նախագահի, նախագահության թեկնածու Սերժ Սարգսյանի: Այդ միջոցառումներից առաջինը տեղի ունեցավ փետրվարի 8-ին, Ֆրանսիայի Լիոն քաղաքում: Նույն օրը նմանօրինակ ձեռնարկ կազմակերպվեց Լիբանանի մայրաքաղաք Բեյրութում, իսկ երկու օր հետո, փետրվարի 11-ին, Նյու Յորք-Նյու Ջերսիի շրջանում: Այսօր հերթը Լոս Անջելեսինն է, որտեղ ՌԱԿ-ի անդամները, համակիրներն ու այլ կազմակերպությունների ներկայացուցիչները իրենց զորակցությունը կհայտնեն Ս. Սարգսյանին: Ստորեւ՝ Լիոնից ստացված հաղորդագրության Ֆրանսիայի ՌԱԿ շրջանային վարչության կազմակերպած ձեռնարկի մասին:***

Հայաստանի Հանրապետութիւնը արդէն 22-տարի է որ ազատ եւ անկախ է, հայ Ժողովուրդը, հակառակ դժուարին մարտահրաւէրներուն, իր նորագոյն պատմութեան լուսաւոր շրջանը կ՚ապրի, եւ, այսուամենայնիւ, անկախ Հայաստանը ամրապնդելու համար լուրջ պահանջներու առջեւ կը գտնուի: Իսկ Արցախը, իր ազատութիւնը տեւականացնելու ու տնտեսական վիճակը բարելաւելու համար՝ մեր բոլորին անմիջական օգնութեան կը կարօտի:

Ինչ կը վերաբերի Սփիւռքի հայ գաղութներուն, անոնք իրենց գոյատեւման հրամայականները պէտք է պատշաճեցնեն արդի իրականութեան պահանջներուն համապատասխան՝ հայակերտում եւ հայրենակերտում, այլ խօսքով՝ պէտք է բարեկարգել, վերանորոգել ու զօրացնել հայկական գաղութները ի շահ Հայաստանի, անոր պետականութեան:

Արդ, Ռամկավար Ազատական կուսակցութեան Ֆրանսայի շրջանակը ՀՀ նախագահական առաջիկայ ընտրութիւններու առթիւ զօրավիք կը կանգնի գործող նախագահին՝ յանձին Սերժ Սարգսեանի, զայն նկատելով յարմարագոյն թեկնածուն, անոր վերընտրուելու յոյսով: Արդարեւ, Ս. Սարգսեան 5 տարի առաջ երկրին կառավարումը ստանձնեց քաղաքական ու տնտեսական դժուարին



*Գլխավոր բանախոսը՝ Վազգեն Էսկիճյան*

ժամանակաշրջանին եւ յաղթահարելով բազում դժուարութիւններ՝ այսօր բոլոր միւս թեկնածուներէն աւելի պատրաստ է նոր մարտահրաւէրները դիմագրաւելու:

ՌԱԿ-ը վստահ է, որ Հայաստանի յետագայ զարգացման ու հզօրացման համար շատ կարեւոր է քաղաքական ներկայ ուղիին շարունակութիւնը՝ էական որոշ ճշգրտումներով հանդերձ, նաեւ տարածաշրջանի անվտանգութեան եւ խաղաղութեան պահպանման հրամայականը:

Արցախեան հարցով նախագահ Սերժ Սարգսեանի ջանքերը, վճռական ու խելամիտ դիրքորոշումը կարեւոր երաշխիք է հայկական մեր երկու պետութիւններու անվտանգութեան եւ զարգացման համար:

Ս. Սարգսեանի նախագահութեան այս 5 տարիներուն նոր կամեցողութիւն ու որակ դրսեւորեցին Հայաստան-Սփիւռք յարաբերութիւնները՝ նոր վստահութիւն ներշնչելով սփիւռքահայութեան, նոր հնարաւորութիւն տալով սփիւռքահայութեան՝ գործնական ներդրում ունենալու Մայր հայրենիքի կայունացման գործընթացին մէջ, շնորհիւ անոր հետեւողական քաղաքականութեան:

Հայ դատի պաշտպանութեան բնագաւառին մէջ ընդլայնուեցաւ Հայոց ցեղասպանութիւնը պաշտօնապէս ճանաչցող երկիրներու աշխարհագրութիւնը եւ նպաստեց այդ հարցով սփիւռքահայ գաղութներու նպատակասլաց գործունէութեան: *Տես էջ 3*

# «Այսօր գյումրեցուն պետք են տանիք, կայուն աշխատանք եւ հավատ վաղվա օրվա հանդեպ»

## *Հանրապետության երկրորդ քաղաքում նախընտրական հանդիպման ժամանակ ասաց Սերժ Սարգսյանը*

Նախընտրական քարոզչության շրջանակներում շաբաթ օրը Շիրակի մարզ էր այցելել ՀՀ նախագահի թեկնածու, գործող նախագահ Սերժ Սարգսյանը: Մինչ մարզկենտրոն Գյումրի հասնելը երկրի ղեկավարը նախ հանդիպում էր ունեցել Արթիկ քաղաքի մշակույթի կենտրոնում, որտեղ խոսել էր անցյալ եւ ներկա ծրագրերից, նաեւ պատասխանել տեղում առկա մի շարք խնդիրների մասին ներկաների հարցերին: Այնուհետեւ նախագահի թեկնածուն այցելել էր Աշոցքի Թորոս գյուղի մերձակայք, ներկա եղել այստեղ անցկացվող «Շիրակի ձմեռ» ավանդական տոնահանդեսին:



ARMENPRESS

Գյումրեցիների հետ նախընտրական հանդիպումը տեղի ունեցավ բազմամարդ Թատերական հրապարակում: «Երբ այցելում եմ ձեզ,- դիմելով քաղաքի բնակիչներին, ասաց Սերժ Սարգսյանը,- միշտ ունենում եմ երկակի զգացումներ: Մի կողմից Գյումրու եւ գյումրեցու նկատմամբ պարտավորվածության զգացում, որն ինձ հուշում է ավելին, գուցե նաեւ անհնարինն անել, որպեսզի օր առաջ Գյումրին դառնա ավելի բարեկեցիկ ու բարեկարգ՝ վերագտնելով իր երբեմնի հպարտությունն ու քաղաքային կյանքին բնորոշ նախանձելի որակները: Մյուս կողմից ունեմ հանգստության ներքին զգացում, քանի որ այս տարիների ընթացքում շարունակել ենք Գյումրու վերականգնման դժվարին առաքելությունը՝ դրա համար չխնայելով ոչ ժամանակ, ոչ միջոցներ եւ ոչ էլ հոգատարություն ու ուշադրություն»: Այդ ուղղությամբ շինարարական աշխատանքները չեն դադարեցվել նույնիսկ համաշխարհային սոցիալ-տնտեսական ճգնաժամի պայմաններում:

Նախագահի թեկնածուի խորին համոզմամբ, «աղետի գոտի» արտահայտությունը գնալով ավելի քիչ է բնորոշում Գյումրի քաղաքը: «Այժմ, երբ գրեթե ամբողջությամբ ավարտել ենք Գյումրու բնակարանաշինական ծրագրերը,- ասաց նա,- իշխանությունների համար առաջնահերթ են զարգացման նպատակադրումները: Այսօր գյումրեցուն պետք է տանիք, կայուն աշխատանք եւ հավատ վաղվա օրվա հանդեպ: Մեր աշխատանքներն ու ջանքերն այս երեք ուղղություններով երբեք չպետք է դադարեն եւ, ամենակարեւորը, պետք է լինեն փոխկապակցված»: Մայրաքաղաքային, մարզային ու տեղական-համայնքային իշխանությունների համադրված գործողությունների առաջնահերթություններ են դառնալու, ինչպես նշվեց, արտադրական նոր հնարավորությունների ու աշխատատեղերի ստեղծումը, հարկային քաղաքականության նոր մոտեցումներով ներդրումները դեպի համայնքներ ուղղելը, քաղաքային տնտեսությունը կարգի բերելն ու քաղաքային համայնքին վայել ենթակառուցվածքների ձեւավորումը, բարոյահոգեբանական մթնոլորտի առողջացումը, քաղաքացիների սոցիալական վիճակի բարելավումը եւ շատ ու շատ այդպիսի խնդիրներ: Գյումրին պետք է դառնա մեր առավել արագ եւ դինամիկ զարգացող քաղաքային բնակավայրերից մեկը: Նաեւ սա է լինելու, թեկնածուի արտահայտությամբ, մեր ապահով հայրենիքի հիմնական ցուցիչներից մեկը:

Խոսելով նաեւ տեղական ինքնակառավարման կատարելագործման ու այս համակարգում սրբագրումների անհրաժեշտության, Գյումրու՝ որպես մշակութային քաղաքի ու ԱՊՀ այս տարվա մշակութային մայրաքաղաքի մասին, Սերժ Սարգսյանը հավաստեց, թե առաջիկա տարիներին շարունակելու են Երեւանի «բեռնաթափման» համալիր ծրագիրը՝ պետական, նաեւ կրթական, մշակութային ու տնտեսական առանձին գործառույթներ բաշխելով հանրապետության այլ տարածքներում: Իր վերընտրվելու պարագայում ոչ շատ հեռու ապագայում այս ուղղությամբ կլինի որոշում, «որը, վստահաբար, դուր կգա գյումրեցիներին»: Տեսանելի ապագայում Հյուսիս-հարավ ծրագրի շրջանակներում Գյումրին Երեւանին է կապված լինելու նոր, ժամանակակից արագընթաց մայրուղով, եւ դա արդեն որակապես նոր Գյումրի է լինելու:

Վերջում հաջողություն մաղթելով գյումրեցիներին, թեկնածուն նրանց կոչ արեց քվեարկել «Դեպի ապահով Հայաստան» ծրագրի համար եւ դրանով իրեն օգնել՝ միասին մեր երկիրը դարձնելու այնպիսին, ինչպիսի երկրում «արժանի ենք ապրելու եւ դուք, եւ մենք»:

**ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ**
**Գյումրի**

# Րաֆֆի Հովհաննիսյանի ծրագրում էլ աղետի գոտու խնդիրը կարեւոր տեղ ունի

**Անցած կիրակի իր նախընտրական քարոզարշավը Շիրակի մարզում է անցկացրել ՀՀ նախագահի թեկնածու Րաֆֆի Հովհաննիսյանը: Այցելելով մարզի մի շարք համայնքներ ու զրուցելով մարդկանց հետ, «Ժառանգության» առաջնորդն այնուհետեւ նույն կերպ շրջել է մարզկենտրոն Գյումրիում, իսկ երեկոյան ընտրողների հետ հանդիպում ունեցել Վարդան Աճեմյանի անվան պետական դրամատիկական թատրոնի լեփ-լեցուն դահլիճում: Այստեղ հավաքվածները նրան դիմավորել են մեծ ոգեւորությամբ:**

**«Գյումրին այն քաղաքն է,- դիմելով ներկա ընտրողներին՝ ասել է նախագահի թեկնածուն,- որտեղ «Ժառանգությունն» ավանդաբար ստացել է ամենաշատ ձայները: Այսօր ես ներկայացնում եմ ոչ թե «Ժառանգությունը», այլ առաջադրվել եմ որպես ձեր բոլորի շահերի պաշտպան թեկնածու՝ անկախ ձեր կուսակցական համակրանքներից: Ես ասում եմ՝ ժամանակն է վայր դնել կուսակցական դրոշները եւ վերջապես այս 20 տարիների ընթացքում առաջին անգամ միասին ապահովել ժողովրդի հաղթանակը»:**



**Րաֆֆի Հովհաննիսյանի նախընտրական ծրագրի մեջ, ինչպես նշել է նա, կարեւոր տեղ է զբաղեցնում աղետի գոտու հիմնախնդիրը: Իր նախագահի ընտրվելու դեպքում 2014 թվականին պետական բյուջեում կլինի նվազագույնը 100 մլն դոլարին համարժեք դրամ ներդրում աղետի գոտու լիարժեք վերականգնման համար: Խոսքը ոչ միայն բնակարանային ֆոնդի մասին է, այլ նաեւ արդյունաբերական ու գյուղատնտեսական հզորությունների վերականգնման, նորագույն տեխնոլոգիաների հիման վրա նոր հնարավորությունների, մարդկանց բարձր վարձատրվող աշխատանքի պայմանների ստեղծման, որպեսզի այլեւս ոչ մի գյումրեցի չարտագաղթի իր հայրենիքից, իսկ մեկնածները վերադառնան: Դրա համար Գյումրին կհռչակվի ազատ տնտեսական գոտի, ավելի տեսանելի կյանքի կկոչվի նաեւ տեխնոպարկը, մեկ տարի անց «աղետի գոտի» հասկացությունը կանցնի պատմության գիրկը:**

**«Քանի դեռ մենք ունենք մի ոտաբոբիկ, անկոշիկ աշակերտ, դոմիկի մեջ ապրող մի հայ մարդ, Հայաստանի իշխանավորը, նախագահը անքուն գիշեր պիտի անցկացնի, ինքն էլ պիտի ապրի ժողովրդի նման», ասել է նախագահի թեկնածուն՝ խոսելով սոցիալական խնդիրների մասին:**

**Խոսելով նաեւ տարբեր այլ հարցերի մասին ու հավաքվածներին խորհուրդ տալով «գյումրեցու թասիբով» մասնակցել ընտրությանը, նախագահի թեկնածուն ասել է. «Դուք արդեն ընդունել եք, որ սա ձեր պայքարն է: Սա այլեւս Րաֆֆիի ու Սերժի, Հանրապետականի ու «Ժառանգության» պայքարը չէ: Սա պայքար է բարու համար, եւ այս անգամ բարին պիտի հաղթի...»:**

**Գ. Մ.**

# Ցավակցություն

«Ազգ» օրաթերթի խմբագրությունը խորապես ցավակցում է իր աշխատակից Ռուզան Փիրիջանյանին սիրելի հոր՝

**Աշոտ Փիրիջանյանի**

մահվան կապակցությամբ:

Հոգեհանգիստը տեղի կունենա այսօր՝ ժ. 18-ից, Կասյան 4 հասցեում, հուղարկավորությունը՝ վաղը՝ փետրվարի 13-ին, ժ. 13-ին, նույն տեղից:

# Կլոր սեղանի քննարկումներում տնտեսական կապերն են

Վաշինգտոնից ստացված հաղորդագրությունը տեղեկացնում է, որ Ամերիկայի հայ ազգային կոմիտեի (Հայ դատի) կենտրոնական գրասենյակի Արամյան դահլիճում անցյալ շաբաթվա կլոր սեղանի քննարկումներն անդրադարձել են հիմնականում Մ. Նահանգներ-Հայաստան տնտեսական կապերի ընդլայնման գործընթացներին: Քննարկումներին մասնակցել են պետքարտուղարության, Ամերիկայում ՀՀ դեսպանատան եւ Հայ դատի գրասենյակի ներկայացուցիչները:

Բացման խոսքով հանդես եկող Հայ դատի հանձնախմբի գործադիր տնօրեն **Արամ Համբարյանը** ընդգծել է գործնական քայլերի եւ ներդրումների կարեւորությունը այդ կապերն ընդլայնելու գործում: Նույն հանձնախմբի առեւտրի եւ ներդրումների քաղաքականության մասնագետ **Նորա Խանարյանը** ներկայացրել է կառավարական, անհատական եւ բիզնեսի մակարդակներում կոնկրետ սցենարներ հետագա համագործակցության համար, հատկապես տեղեկատվական տեխնոլոգիաների եւ դեղամիջոցների արտադրության ոլորտներում:

Իր հերթին պետքարտուղարության անունից խոսելով, կովկասյան գործերի եւ տարածաշրջանային հակամարտությունների բաժնի տնօրեն **Ջասթին Ֆրիդմանը**, նշելով հանդերձ Մ. Նահանգների շահագրգռվածությունը Հայաստանի հետ տնտեսական կապերի ընդլայնման գործում, այնուամենայնիվ խոսել է նաեւ որոշ խոչընդոտների մասին, որոնց վերացումը հայկական կողմից ջանքերի շնորհիվ մեծապես կարող էր խթանել այդ կապերի հետագա զարգացումը: Նա մասնավորապես անդրադարձել է պայմանավորվածությունների ճշգրիտ գործադրման, թափանցիկության եւ հարկային արդարացի կիրառումների հարցերին:

ՀՀ դեսպանատան խորհրդական **Անդրանիկ Հովհաննիսյանը** ներկայացրել է միջազգային մի շարք խոշոր հաստատությունների (Համաշխարհային բանկ, «Ուոլ սթրիթ ջոռնըլ», «Հերիթիջ» եւ «Ֆրիդոմ հաուս») դրական արձագանքները տնտեսական ոլորտում Հայաստանում կատարված բարեփոխումների վերաբերյալ:

Հ. Ծ.

# Երեւան-Թբիլիսի գնացքի տոմսերի արժեքը փետրվարին իջել է 10 տոկոսով

«Հարավկովկասյան երկաթուղի» ընկերությունը հայտարարում է Երեւան-Թբիլիսի-Երեւան գնացքի տոմսերի գնի նվազեցման մասին: Համապատասխան «ՀԿԵ» ՓԲԸ ճկուն սակագնային քաղաքականությանը՝ տոմսերի գները փետրվարին կլինեն 10 տոկոսով ցածր:

Այսպիսով, Երեւանից Թբիլիսի հասնելու համար պլացկարտ վագոնի ուղեւորները փետրվարին կվճարեն 7 660 դրամ, կուպեի մեկ տոմսի արժեքը կկազմի 11 610 դրամ, իսկ ննջավագոնի մեկ տոմսը կարժենա 16 030 դրամ:

# Կարգալույծ քահանա

Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի տնօրինությամբ կարգալույծ է հռչակվել Ոսկան քահանա Բաղումյանը (Տավուշի թեմ)՝ եկեղեցական ծառայությունից հրաժարվելու իր դիմումի հիման վրա:

Կարգալույծ հռչակվածը կդասվի աշխարհականների շարքը՝ Վիգեն Բաղումյան ավազանի անունով:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Շրջանառության հարկ եւ եկամտային հարկ` ի՞նչ անել

## *Պարզաբանումներ է ներկայացնում պետեկամուտների կոմիտեի փոխնախագահ Վախթանգ Միրումյանը*

***Այս տարվանից հարկային դաշտում երկու արմատական փոփոխություններ են ուժի մեջ մտել, ինչը հավելյալ պարզաբանումների անհրաժեշտություն է առաջացրել: Առաջինը եկամտահարկի եւ սոցիալական վճարի միասնականացումն էր` եկամտային հարկի տեսքով, ապա այդ հարկատեսակի էլեկտրոնային հաշվետվություններին անցնելը: Երկրորդը փոքր բիզնեսի` մինչեւ 58 մլն դրամ տարեկան շրջանառություն ունեցողների համար նոր հարկատեսակի` շրջանառության հարկի ներդրումն էր: Դրանց մանրամասներին մեր թերթում առիթ ունեցել ենք անդրադառնալու, իսկ այս փուլում առաջացած խնդիրների պարզաբանման համար դիմեցինք պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Վախթանգ Միրումյանին.***

**- Եկամտային հարկին անցնելու համար անհրաժեշտ նույնականացման քարտերն ու էլեկտրոնային ստորագրությունները հազարավոր հարկատուներ չեն հասցրել ստանալ եւ հիմնականում ոչ իրենց մեղքով: Պետական մարմիններում տեխնիկական խնդիրների պատճառով այդ գործընթացը ձգձգվեց: Սակայն շուտով, մինչեւ փետրվարի 20-ը, հարկատուները պետք է ներկայացնեն էլեկտրոնային եղանակով հունվար ամսվա եկամտային հարկի հաշվետվությունները: Նկատի ունենալով գործընթացի ձգձգվելը, հնարավո՞ր է, որ հաշվետվությունները ներկայացնելու ժամկետը երկարաձգվի:**

- Եկամտային հարկի հաշվետվության ներկայացման ժամկետը սահմանված է օրենքով: Հունվար ամսվա համար եկամտային հարկի հաշվետվությունները պետք է ներկայացվեն մինչեւ փետրվարի 20-ը: Օրենքի փոփոխության առաջարկ այս պահին չկա, հետեւաբար այդ վերջնաժամկետը ուժի մեջ է եւ գործելու է:

Դեռեւս ժամանակ կա, որպեսզի հարկատուները հասցնեն ստանալ նույնականացման քարտերն ու էլեկտրոնային ստորագրությունները: Մենք հույս ունենք, որ նրանք կհասցնեն այդ ժամկետին, քանի որ, փորձը ցույց է տալիս, ժամկետի վերջում այդ քարտերն ավելի մեծ քանակով են սկսում ստանալ:

**- Իսկ եթե այնուամենայնիվ չհասցնեն, տուգանքի՞ կենթարկվեն:**

- Ուշացնելու համար նախատեսվում են վարչական տուգանք եւ հարկային տուգանք: Հարկային տուգանքը հաշվարկվում է հաշվետվությունում ներկայացված գումարի 5 տոկոսի չափով, իսկ վարչական տուգանքը` յուրաքանչյուր 15 օր ուշացնելու համար 20 հազար դրամ:

**- Եկամտային հարկի ի՞նչ դրույքաչափ է վճարվելու, եթե անձն աշխատում է գործարքային հիմունքներով, ոչ որպես մշտական աշխատող:**

- Նույնը, ինչ պայմանագրային աշխատողների համար:

**- Շրջանառության հարկը նոր հարկատեսակ է: Ի՞նչ պարբերականությամբ է վճարվելու այն` եռամսյակայի՞ն, ամսակա՞ն, թե՞ տարեկան: Նույնը նաեւ հաշվետվությունների հետ կապված` ի՞նչ պարբերականությամբ դրանք պետք է ներկայացվեն:**

- Շրջանառության հարկը վճարվելու է եռամսյակային կտրվածքով: Այս հարկը վճարողների համար վերացվել է նաեւ ամսական տեղեկատվություն ներկայացնելու պահանջը` կապված ՀԴՄ-ների հասույթների հետ: Մինչ այդ նրանք ՀԴՄ-ների շրջանառության վերաբերյալ ամսական հաշվետվություններ էին տալիս: Շրջանառության հարկի ներմուծմամբ այդ 12 հաշվետվությունները վերացվել են` դառնալով 4-ը, որոնց մեջ ներառվելու են ՀԴՄ-ի ֆիսկալ ցուցանիշները: Եվ հաշվետվությունը, եւ վճարումը պետք է կատարվեն մինչեւ եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը:

**- Իսկ եթե կազմակերպությունն աշխատում է միայն անկանխիկ եւ չունի ՀԴՄ, ի՞նչ հաշվետվություն է ներկայացնելու:**

- Եթե չունի ՀԴՄ եւ աշխատում է անկանխիկ, ապա ՀԴՄ-ի մասով հաշվետության մեջ ոչինչ չի նշվի:

**- Դրամարկղային գրքույկը ե՞րբ եք վերացնելու:**

- Լավ կլինի, իհարկե, որ կանխիկը վերանա: Ինչ վերաբերում է դրամարկղային գրքույկներին, ապա այստեղ նախատեսվում է 2014-ից անցում կատարել էլեկտրոնային դրամարկղին: Եթե կազմակերպությունը չի աշխատում կանխիկ, չունի ՀԴՄ, հետեւաբար անհրաժեշտություն չկա դրամարկղային գրքույկ ունենալու:

**- Ֆինանսների նախարարության եւ ՊԵԿ պաշտոնյաների կողմից հայտարարվեց, որ շրջանառության հարկին անցելը պարտադիր չէ, բայց հարկային ծառայությունում հարկատուներին ասում են, որ պարզեցված շահութահարկի դաշտից պետք է անցնեն շրջանառության հարկին կամ էլ ավելացված արժեքի հարկին: Ի՞նչ է սա նշանակում:**

- Անցումը շրջանառության հարկին կամավոր է այն իմաստով, որ եթե հարկատուն չի ցանկանում աշխատել շրջանառության հարկով, կարող է անցնել ավելացված արժեքի հարկի եւ շահութահարկի դաշտ: Շրջանառության հարկի ներդրման գաղափարն այն է, որ մենք, որպես վարչարարություն իրականացնող մարմին, հեռու մնանք փոքր բիզնեսից: Շրջանառության հարկը պարզ դաշտ է, մեր գործառույթը սահմանափակվում է շրջանառությունը ամրագրելով: Մենք չենք խորանում ծախսերի նվազեցման կարգի, հաշվապահական հաշվառման մեջ: Եվ ընդհանրապես, փոքր բիզնեսի նկատմամբ վարչարարությունն անիմաստ է: Բացի դրանից, եթե լիներ ավելացված արժեքի հարկի դաշտ, պարզեցված շահութահարկի դաշտ եւ շրջանառության հարկի դաշտ, ապա բիզնեսն ինքը կխճճվեր դրա մեջ:

**- Այսինքն, պարզեցված շահութահարկի դաշտն այլեւ չի գործելու:**

- Ոչ, չի գործելու: Փոքր բիզնեսի համար գործելու է շրջանառության հարկը:

**- 2012-ի պարզեցված շահութահարկի տարեկան հաշվետվության ներկայացման եւ տարեկան շահութահարկի վճարման ժամկետները մնացել են նո՞ւյնը:**

- Այո, մինչեւ ապրիլի 15-ը:

**- Հարկատուների համար էլեկտրոնային եղանակին անցնելը դժվարություններ չի՞ առաջացնի նրանց համար, լրացուցիչ մասնագիտական օգնության կարիք չե՞ն ունենա:**

- Հատուկ գիտելիքների կարիք չկա եկամտային հարկի հաշվետվությունների էլեկտրոնային եղանակից օգտվելու համար, իսկ շրջանառության հարկը շատ հեշտացնում է հարկատուների գործը: Նրանք նշելու են միայն իրենց շրջանառությունը, եւ հարկի չափը ծրագրով արդեն կհաշվարկվի եւ կերեւա:

Հարցազրույցը
ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ

# Հայրիկյանական տրագիկոմեդիայի ավարտը. ընտրությունները չեն հետաձգվի

*1-ին էջից*

**Նա առաջարկում էր ընտրություններին հաջողության հասնելու համար միավորվել եւ միասնական թեկնածուով հանդես գալ: Եթե ընդդիմադիր թեկնածուները համաձայն են, ապա ինքը համաձայն է Սահմանադրական դատարան դիմում ներկայացնել եւ ընտրությունները հետաձգել երկու շաբաթով:**

**Հայրիկյանի հայտարարությունը նախագահի թեկնածուներն ըստ էության թողեցին անպատասխան, իսկ վիրավոր թեկնածուն կիրակի ցերեկը` ժամը 15:30-ին այցելեց Սահմանադրական դատարան ու դիմում ներկայացրեց ընտրությունները հետաձգելու պահանջով: Սահմանադրական դատարանում չէին հասցրել ուսումնասիրել դիմումը, երբ Հայրիկյանի փաստաբան Լեւոն Բաղդասարյանը հայտարարեց, որ նախագահի թեկնածուն նոր դիմում է ներկայացրել եւ հետ է վերցնում ընտրությունները երկու շաբաթով հետաձգելու պահանջը: Հայրիկյանի շտաբից հերքում են, թե դիմումը հետ վերցնելու որոշումը պայմանավորված է այն հանգամանքով, որ կիրակի երեկոյան Հայրիկյանին կարճ ժամանակահատվածով այցելել է ՀՀ նախագահ, նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանը: Շտաբից միայն ասացին, որ միասնական թեկնածու չձեւավորվեց, դա է պատճառը, որ Հայրիկյանը դիմումը հետ է վերցրել: Ավելի ուշ մեզ տեղեկացրին, որ Հայրիկյանի ինքնազգացողությունը լավ է, եւ նա երեկոյան դուրս է գրվել հիվանդանոցից: Այսօր` ժամը մեկին ԱԻՄ առաջնորդը հրավիրել է մամուլի ասուլիս, որտեղ պարզաբանումներ կտա իր մահափորձի ոդիսականի, առողջական վիճակի եւ փոփոխվող որոշումների վերաբերյալ:**

ՖՐԱՆՍԻԱ

# Դէպի ապահով Հայաստան` Սերժ Սարգսեանի գլխաւորութեամբ

*1-ին էջից*

Եւ ինչպէս Հայաստանի մէջ ՌԱԿ-ը, այնպէս ալ Սփիւռքի տարածքին գործող ՌԱԿ-ը 2013թ. նախագահական ընտրութիւններուն կը պաշտպանէ ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանի թեկնածութիւնը եւ կարելի բոլոր միջոցներով կը սատարէ անոր յաղթանակին, թէեւ հասկնալի կերպով, սփիւռքահայերս քուէարկու ձայն չունինք, սակայն մեր ազգային քաղաքականութեան թելադրանքով թիկունք կը կանգնինք անոր վերընտրութեան, մերը դարձնելով անոր նախընտրական կարգախօսները- «Ապահով Հայաստան, որուն գրաւականն է Հայոց բանակը, արտաքին յստակ քաղաքականութիւն, ԼՂՀ ճակատագրի որոշողը միայն Արցախի ժողովուրդն է, միշտ Սփիւռքի մեր քոյրերուն եւ եղբայրներուն հետ, արդար եւ ազատ Հայաստանն է ապահով Հայաստանը` ապահովուած ընտանիք, աշխատանք եւ արժանապատիւ վաստակ, ապահովուած գիւղ, արդիւնաւէտ գիւղատնտեսութիւն, համաչափ զարգացում երկրի ամբողջ տարածքին, ընկերային պաշտպանուած ընտանիքներ, առողջ ընտանիքներ, մշակոյթ, կրթութիւն եւ գիտութիւն, երիտասարդութիւն եւ սպորտ»:





ՌԱԿ-ը վստահ է նաեւ, որ Սերժ Սարգսեանը պիտի շարունակէ ներքին մթնոլորտի մեղմացման իր քաղաքականութիւնը, պիտի ապահովէ տնտեսութեան իրական բարելաւումը եւ մրցակցութիւնը` բարենպաստ պայմաններով: ՌԱԿ-ը վստահ է նաեւ, որ յառաջիկայ 5 տարիներուն Սերժ Սարգսեան նոր բարեփոխումներ պիտի իրականացնէ ժողովրդավարութեան, մարդու իրաւունքներու պաշտպանութեան, հաւասարութեան, խօսքի ազատութեան, քաղաքացիական հասարակութեան կայացման ու զարգացման մարզերուն մէջ: Միաժամանակ, մեր թեկնածուի ուշադրութեան կը յանձնենք գիտութեան, կրթութեան, մշակոյթի, ազգային ներուժի արտացոլման խնդիրները` Հայաստանի հզօրացման համար...

Այս առթիւ, ուրբաթ 8 փետրուար 2013 թ. Լիոնի lecoeron շքեղ ճաշարանին մէջ ճաշկերոյթ-բանախօսութիւն տեղի ունեցաւ, կազմակերպութեամբ ՌԱԿ Ֆրանսայի շրջանային վարչութեան, ներկայութեամբ Ռոն-Ալփեան շրջանի հոգեւոր տեսուչ Տ. Դաւիթ արք. Սահակեանի, ինչպէս նաեւ գաղութիս բազմաթիւ ներկայացուցիչներու, քաղաքական գործիչներու, համակիրներու, բարեկամներու, կուսակցութեանս անդամներու, ՌԱԿ ակումբներու ատենապետներուն, ինչպէս` Լիոնէն Կարապետ Փալթօպետրոսեան, Արման Շերէֆ, Վալանսէն Պետիկ Օհանեան, Մարսէյլէն Տիրան Կարապետեան, Շրջանային վարչութեանս անդամներ Ժագ Էքմէքճեան, Մասլէն Երէմեան, որոնք իրենց զօրակցութիւնն ու խանդավառութիւնը յայտնեցին Սերժ Սարգսեանի թեկնածութեան նկատմամբ: Մեծ համոզումով բանախօսեց ՌԱԿ Շրջանային վարչութեան ատենապետ Վազգէն Էսկիճեան:

Ներկայ մասնակիցներու իսկ վկայութեամբ մեծ յաջողութեամբ աւարտեցաւ հանդիպումը, մանաւանդ որ կը մասնակցէին երիտասարդ սերունդի բազմաթիւ ներկայացուցիչներ ալ, որոնք տոգորուած են Հայ դատի հետապնդման, աւելի հզօր Հայաստանի մը ստեղծման գործին իրենց մասնակցութիւնը բերելու, ամէն գինով Հայաստանի ժողովրդավարացումին իրենց նպաստը բերելու տենչականով:

ՌԱԿ ՖՐԱՆՍԱՅԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
Լիոն

## Ղարաբաղ-25-ամյակ

# Ոչինչ չի փոխվել, բացի մի բանից՝ Արցախի անկախացում

Մեզ հաճախ են կոչում անկախության սերունդ, չնայած մեզանից շատերը չեն էլ հասկանում, թե այդ ի՞նչ է «անկախության սերունդը» կամ առհասարակ՝ անկախությունը: Ոմանք էլ բոլորովին այլ սերունդ են մեզ կոչում, օրինակ՝ պատերազմի, երկրաշարժի, սովի-ցրտի-մթի... Մի բան է հստակ, մենք այս ամենի միջով անցած սերունդն ենք, ու սա ոչ մեր ուժն է, ոչ մեր դժբախտությունը, ուղղակի՝ մենք ծնվել ենք այն ժամանակ, երբ ծնվել ենք:

Ղարաբաղյան առաջին գծում կռվող Ավետիսի կինը՝ **տիկին Մարոն**, էլի կարտոֆիլ էր խաշել, թթու, ինչպես միշտ, կար, ու ամբողջ շենքի կանայք իրենց երեխաների հետ տիկին Մարոյի տանն էին (շատերը, որովհետեւ իրենց տներում ուտելիք չունեին). կարտոֆիլը շատ էր, թթուն էլ: Ոչ ոք երբեք այս կնոջն արտասվելիս չէր տեսել, բայց նա ամեն առավոտ, չգիտես ինչու, ուռած աչքերով էր, ոմանք պնդում էին, թե ցրտից է, ոմանք ճնշման տատանումներ էին տեսնում, եւ միայն մի օր, բակում, երբ «մեծ մարդկանց պես», սահնակով փայտ էինք բերում, Ավետիսի ու տիկին Մարոյի որդին՝ Ռուբենը, ասաց. «Գիտե՞ս, մամաս ամբողջ գիշեր լացում է...», զարմանալի էր, այդպես ուղղակի չէր կարող լինել, տիկին Մարոն միշտ ժպտում էր, անգամ, երբ թթուն այնքան էր թթվել, որ ուտվում էր միայն այն պատճառով, որ միակ ուտելիքն էր՝ կարտոֆիլի հետ, անշուշտ:

... Մի առավոտ, շատ շուտ, Ռուբենի ձայնը տարածվել էր շենքում, պարզվեց՝ «մերոնք Լաչինը գրավել են», հասկացողները ուրախացան, երեխաները, անկախության սերունդը՝ եւս, բայց չհասկանալով, թե այդ ի՞նչ է Լաչինը...

Պատերազմն ավարտվեց, Ավետիսը վերադարձավ: Կարճ ժամանակ անց, նրանք իրենց տունը շեն վերանորոգեցին, Ռուբենն ու քույրը՝ Արմինեն, նոր ու շատ զգեստներ սկսեցին հագնել, տիկին Մարոն էլ ամբողջ շենքին թթվով խաշած կարտոֆիլի չէր կանչում, քանի որ կարտոֆիլ ու թթու նրանք էլ չէին ուտում. տիկին Մարոյի աչքերն էլ ուռած չէին...

... 25 տարի առաջ, նախքան փետրվարի 20-ին ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների մարզային խորհուրդը կդիմեր Հայաստանի ու Ադրբեջանի ՍՍՀՄ-ի Գերագույն խորհուրդներին՝ լուծելու ղարաբաղյան հարցը, այն է՝ դուրս գալ Ադրբեջանի կազմից՝ մտնելով Հայկական ԽՍՀ, փետրվարի 12-ին, Հադրութի շրջանում տեղի ունեցավ առաջին ապստամբությունը... Այս օրերին լրանում է արցախյան շարժման 25-ամյակը... (Ի դեպ, **«Ազգ»**-ը այդ կապակցությամբ հատուկ համար է պատրաստում: Ծ. խ.):

Հավանաբար յուրաքանչյուր բառ կլինի ավելորդություն, բոլորս ենք հասկանում, թե ի՞նչ հաղթանակ էր սա, որքա՞ն էր կարեւոր... Բայց Ավետիսը, պատերազմից մեկ-երկու ամիս անց, չունենալով աշխատանք, թանկարժեք մեքենա գնեց, Ռուբենն էլ բակ՝ խաղալու չէր իջնում, Ավետիսը որոշել էր, որ որդին պետք է զինվորական դառնա, Ռուբենն ընդունվեց ռազմական ուսումնարան: Միանգամից ասենք, ուսումնարանը Ռուբենը չավարտեց, ինչպես ինքն էր ասում՝ «Ինչի՞ս է պետք զինվորական կյանքը, որ ամբողջ օրը սրա-նրա հրամաննե՞րը կատարեմ»: Ռուբենը պարբերաբար փախչում էր ուսումնարանից, Ավետիսը պարբերաբար ազատամարտիկ-զինվորական ընկերներին էր տեսնում, խնդրում, հյուրասիրում... Ի վերջո, Ռուբենը դուրս եկավ ուսումնարանից, սակայն Ավետիսն անդրդվելի էր. Ռուբենը ռազմական ոստիկան դարձավ, ամուսնացավ... Ավելի վաղ ամուսնացել ու Ռուսաստան մշտական բնակության էր մեկնել Արմինեն, հայրենիք ազատագրած Ավետիսի դուստրը...

Ի վերջո, ի՞նչ է փոխվել Ադրբեջանում 25 տարի անց: Ոչինչ, բացարձակապես ոչինչ: Եթե 25 տարի առաջ Ադրբեջանում հայն ատելի էր, այսօր Ադրբեջանում նախագահական ներման, պարգեւների, աշխատավարձի, բնակարանի են արժանացնում հային կացնով սպանողին ու զուգահեռաբար, պետական պարգեւներից ու հովանավորությունից զրկում իրականությունը պատմելու ընդամենը փորձ կատարած գրողին: Ուրեմն ինչպես 25 տարի առաջ, այսօր էլ Ադրբեջանում ճիշտն ասողը «դուշման» է, հայ սպանողը՝ «ղուրբան»...

... Ապրիլի 24-ին, Ծիծեռնակաբերդի բարձունքում, հերթապահություն իրականացնելիս, հանդիպեցի իմ մանկության ընկեր Ռուբենին՝ համազգեստով: Մոտեցա, ճանաչեց, բարեւեցինք, շատ քիչ՝ բայց զրուցեցինք: Ռուբենը ժամերն էր հաշվում. «... մի ժամ բան մնաց, շուտ հանձնեմ հերթափոխս, գնամ... էսօր ուզում եմ նոր ավտո առնեմ...», ասաց հայրենիք ազատագրած Ավետիսի որդի Ռուբենը Ծիծեռնակաբերդի բարձունքում հերթափոխ իրականացնելիս... Ռուբենի մասին մեկ էլ լսեցի մի քանի օր առաջ, նա համազգեստը հանել էր, հրաժարվել էր ծառայությունից ու մեկնել Ռուսաստան, քույրն էր կանչել, շուտով ընտանիքին էլ կտանի «իր մոտ», ասաց տիկին Մարոն, ում պատահաբար հանդիպել էի փողոցում: Իմացա նաեւ, որ Ավետիսի գործերն էլ շատ հաջող չեն, առողջական խնդիրներ ունի... Տիկին Մարոյի աչքերն ինձ ուռած թվացին, նա ձեռքին տոպրակ ուներ՝ կարտոֆիլով լի...

Հայաստանում էլ, 25 տարի անց, կարծես թե ոչինչ չի փոխվել... Մինչդեռ Լաչինը վաղուց արդեն ազատագրված է, իսկ մեզ անվանում են «անկախության սերունդ»: Գուցե խնդիրն այն է, որ մենք միայն ուրախանում ենք հաղթանակով՝ չզգալով ամեն մի հաղթանակից բխող պատասխանատվությունը:

25 տարի առաջ Արցախում շարժում սկսվեց, այսօր Արցախն անկախ պետություն է, ու սա է թերեւս միակ փոփոխությունը, ուրեմն ուրախության հետ՝ նաեւ պատասխանատվություն:

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

# Ջոն Հեֆերն. Պետքարտուղար Քերրին հայ-թուրքական հարաբերությունների մասով կշարունակի հետեւել քաղաքական նույն գծին

*1-ին էջից*

- Մենք սփյուռքի հետ երկու շաբաթ հանդիպումներ ունեցանք: Մեկ շաբաթ Կալիֆոռնիայում էինք, մեկ շաբաթ՝ Արեւելյան ափին: Տասնյակ տարբեր խմբերի հետ հանդիպեցինք՝ կանայք, երիտասարդներ, բիզնեսմեններ, եւ ունեցանք վեց մեծ հանդիպում, որին յուրաքանչյուրը կարող էր ներկա գտնվել: Քննարկումների ժամանակ հիմնականում երեք խումբ հարցեր էին բարձրացվում: Հարցերի առաջին խումբը վերաբերում էր պատմությանը, տարածաշրջանին, Թուրքիային եւ Ադրբեջանին: ԱՄՆ հայ համայնքն այդ հարցերում հստակ դիրքորոշումն ունի: Ինձ համար ուրախալի է, որ բոլոր հանդիպումների ժամանակ սփյուռքին հետաքրքրում էր հատկապես մերօրյա Հայաստանը: Եվ դրա հետ կապված՝ հետաքրքրվում էին ընտրություններով, ժողովրդավարությամբ, կանանց եւ գործարար միջավայրի հարցերով: Վերջապես, նրանք հետաքրքրվում էին, թե ինչպե՞ս կարող էին օգնել Հայաստանին: Մենք որոշակի գաղափարներ ներկայացրինք, թե ինչպես կարող են համագործակցել մեզ հետ, դեսպանության, Միջազգային զարգացման գործակալության եւ այլ կազմակերպությունների ու քաղաքացիական հասարակության կառույցների հետ:

**- Փաստորեն հանդիպումներից տպավորությունը դրական է:**

- Միանշանակ դրական է: Հնչում էին դժգոհություններ՝ կապված պետքարտուղարության, ԱՄՆ քաղաքականության վերաբերյալ, սակայն ընդհանուր առմամբ տպավորությունները դրական էին եւ շատ հաճելի: Ուրախալի էր տեսնել նրանց հետաքրքրությունը Հայաստանի նկատմամբ եւ աջակցելու պատրաստակամությունը:

**- Պարոն դեսպան, մեկ շաբաթից Հայաստանում սպասվում են նախագահական ընտրություններ, ի՞նչ արդյունքներ եք ակնկալում եւ ինչպե՞ս եք գնահատում ընթացող նախընտրական քարոզարշավը:**

- Մայիսին խորհրդարանական ընտրություններին ուշադրությամբ հետեւել ենք: Միջազգային հանրությունն էր ներկա, տեղական դիտորդներ կային, եւ ամբողջ երկրում գործընթացի նկատմամբ դիտարկում էր իրականացվում: Մայիսին երկու դրական առաջընթաց արձանագրվեց: Առաջինը լրատվամիջոցների հասանելիությունն էր, ընդդիմադիր ձայները հասանելի էին հանրությանը: Այս միտումը շարունակվում է նաեւ նախագահական ընտրություններում էլ: Ես հույս ունեմ, որ միտումը կպահպանվի նաեւ ընտրություններից հետո: Հաջորդ դրական տեղաշարժը քվեարկության օրը տեղամասերում ընտրության կազմակերպումն էր: Նոր ընտրական օրենսգրքի իրականացումը, օրենքների պահանջների բավարարումը տպավորիչ են:

Այժմ նշեմ երկու ոլորտ, որտեղ դեռ անելիք կա: Մայիսյան ընտրություններին եղան բազմաթիվ հաղորդումներ ընտրակաշառքների վերաբերյալ եւ վարչական ու կուսակցական ռեսուրսի միախառնումը: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդներն այս երկուսը ներկայացրին, որպես լուրջ խնդիր: Նախագահը խոստացել է, որ այդ խնդիրները լուծում կստանան, եւ առաջիկա ընտրություններին դրանց լուծումը կարեւոր է: Ընտրակաշառքների հետ կապված համաժողով էինք կազմակերպել, որին մասնակցեցին բոլոր իրավապահ կառույցների ներկայացուցիչներ, նրանք խոստացան, որ բոլոր խախտումներով, նաեւ ընտրակաշառքների վերաբերյալ հաղորդումների հետ կապված, կլինեն քննություն եւ քրեական հետապնդում: Հասկանալի է, որ հաղորդում տվող անձանց անունը պետք է մնա գաղտնի եւ ընտրողները կարող են խախտումների մասին հաղորդում ներկայացնել: Ես հույս ունեմ, որ ընտրողները դա կանեն: Վարչական ռեսուրսի հետ կապված՝ կարծում եմ, կրթության նախարարը լավ քայլ է կատարել՝ հրապարակավ քննադատելով դպրոցի տնօրեններին, ովքեր դպրոցն ու քաղաքականությունը իրար են խառնում: Հույս ունեմ՝ մյուս գերատեսչություններն էլ նման հայտարարություն կանեն, եւ դա հասարակությունը կընկալի: Այս ամենի նպատակն այն է, որ վերականգնվի հայ ժողովրդի վստահությունն ընտրական գործընթացների նկատմամբ:

**- Հանդիպումներից մեկի ժամանակ նախագահ Սերժ Սարգսյանը, անդրադառնալով հայ-թուրքական արձանագրություններին, հստակեցրեց, որ դրանք հավիտյան չեն կարող մնալ Ազգային ժողովում: Ենթադրելի է, որ կամ Հայաստանի կառավարությունը այն կճանաչի անվավեր, կամ էլ արձանագրությունները հետ կկանչվեն: Հաշվի առնելով, որ ԱՄՆ-ում նոր պետքարտուղար է նշանակվել, ինչպիսի՞ լուծում եք տեսնում:**

- Նախկին պետքարտուղար Քլինթոնը այս աշխատանքներին շատ նվիրված էր: Նա գործընթացում ներգրավված էր, Ցյուրիխում արձանագրությունների ստորագրման արարողությանը ներկա էր: Նա հրապարակավ եւ մասնավոր շատ բաց ու հստակ ասում էր, որ Թուրքիան պետք է քայլ կատարի, առանց նախապայմանների վավերացնի արձանագրությունները: Պետքարտուղար Քերրին Սենատում՝ իր ելույթի ժամանակ արձանագրեց, որ շարունակելու է հետեւել նույն քաղաքական գծին հայ-թուրքական հարաբերությունների մասով:

**- Դուք տեղեկություններ ունե՞ք, այս տարի ԱՄՆ Կոնգրեսում Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձեւ կդրվի՞ եւ ինչպիսի՞ն կլինի գործադիր իշխանության վերաբերմունքը:**

- Օրենսդիր իշխանությունը գործադիր իշխանությունից անկախ է եւ անում է այն, ինչ նպատակահարմար է գտնում: Ինչ վերաբերում է վարչակազմի հետ կապված դիրքորոշմանը, ես կարող եմ ասել, որ նախագահ Օբամայի ապրիլքսանչորսյան ուղերձը շատ ուժեղ հայտարարություն էր, փաստերի վիճարկում ընդհանրապես չկար, 20-րդ դարի վատթարագույն վայրագությունների հետեւանքով 1.5 միլիոն հայեր դարձել են տեղահանության եւ կոտորածների զոհ: Թե ի՞նչ եզր կօգտագործի նախագահն այս սարսափելի ողբերգությունը բնորոշելու համար, դա նախագահի որոշումն է, եւ ինչպիսին էլ լինի նախագահի որոշումը, ես հետեւելու եմ նրա հրահանգներին:

**- Նախորդ տարվա կեսերին, հատկապես Ռամիլ Սաֆարովին ներում շնորհելուց հետո Հայաստանի եւ Ղարաբաղի բնակչությունը առավելեւս համոզվեց, որ միակ ելքը ԼՂՀ-ի ճանաչումն է, շատերն էլ կողմ են ԼՂՀ-ի միացմանը Հայաստանին: Դա գուցե պայմանավորված էր նաեւ հանգամանքով, որ ԱՄՆ-ի եւ եվրոպական երկրների արձագանքը համարժեք չէր: Ինչպիսի՞ն կլինի ԱՄՆ դիրքորոշումը, եթե Հայաստանը հայտարարի, որ ճանաչում է Ղարաբաղի անկախությունը:**

- Սաֆարովին ազատ արձակելուց 24 ժամ չանցած ԱՄՆ-ն շատ խիստ հայտարարություն տարածեց: Թե՛ պետքարտուղար Քլինթոնը, թե՛ Սպիտակ տունը հայտարարությամբ հանդես եկան: Նախագահ Սարգսյանն ու արտգործնախարար Նալբանդյանը ողջունեցին այդ հայտարարությունները: Դա խիստ հայտարարություն էր, եւ իրերն իրենց անուններով էին կոչված: Սլաքը ուղղվում էր Բուդապեշտին եւ Բաքվին: Մեր հայտարարությանը հաջորդեցին խիստ հայտարարություններ եվրոպական տարբեր երկրներից, ՆԱՏՕ-ից եւ եվրոպական մի շարք կազմակերպություններից: Մասնավոր քննարկումներում այս հարցին անդրադարձ եղել է, եւ Բաքուն շատ լավ տեղյակ է, թե մենք ու ընդհանրապես միջազգային հանրությունն ի՞նչ դիրքորոշում ունի: Սրա հետ կապված՝ ազդեցությունը բանակցային գործընթացի վերաբերյալ, կարող եմ ասել, մենք ողջունում ենք, որ Հայաստանը շարունակում է բանակցային գործընթացն ու ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակում աշխատանքը: Այս խնդիրը խաղաղ լուծումից բացի այլ լուծում չունի: Վերջնական կարգավիճակի հարցը կորոշեն կողմերը: Ցանկալի չեն լինի միակողմանի որոշումներն ու որեւէ այլ գործողություն, որը կապակայունացնի իրավիճակը:

**- ԱՄՆ-ն ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրներից մեկն է եւ շատ լավ ծանոթ է Ղարաբաղյան հիմնախնդրի էությանը: Նախ աշխարհը ճանաչեց Կոսովոյի անկախությունը, իսկ վերջերս էլ Պաղեստինը ՄԱԿ-ում դիտորդ պետության կարգավիճակ ստացավ, ինչը ենթադրում է, որ Պաղեստինը պետություն ճանաչվելու ճանապարհին է: Ինչպիսի՞ տարբերություններ կան վերոնշյալ երկու երկրների եւ Լեռնային Ղարաբաղի միջեւ, եւ եթե չկան տարբերություններ, ապա ինչո՞ւ աշխարհը չի ճանաչում ԼՂ-ի անկախությունն ու ինքնիշխանությունը:**

- Լեռնային Ղարաբաղի հետ կապված գործընթացը ընթանում է Մինսկի խմբի շրջանակներում: Համանախագահող երկրներն իրենց գոհունակությունն են հայտնում, որ Հայաստանը բանակցային սեղանին է, եւ գործընթացն ընթանում է: Վերջերս Հայաստանի եւ Ադրբեջանի արտգործնախարարները Փարիզում հանդիպումներ ունեցան, նաեւ նոր հանդիպման պայմանավորվածություն կա: Կարծեմ մարտի 4-ին նախատեսվում է հանդիպում կրկին Փարիզում: Այսպես պետք է գործընթացը զարգանա, եւ բանակցային ճանապարհով լուծում գտնել հակամարտությանը: Միջազգային հանրությունը չի կարող որեւէ պայման թելադրել, այդ հարցը պետք է լուծվի բանակցություններով:

Զրուցեց
ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ

# Միջազգային

## Սրան ի՞նչ կասես, Զահիդ Օրուջ

### *Գրող Այլիսլիի ականջը կտրելու համար 10000 մանաթ պարգեւ է խոստացված*

Yotube-ում մի տեսագրություն է տեղադրվել. Միլլի մեջլիսի երկու պատգամավոր, մի պատմաբան եւ երեք գրող-հրապարակախոս «ռինգ» են կանչել գրող Աքրամ Այլիսլիին եւ հրապարակային պարտադրում են, որ հրաժարվի «Քարե երազներ»-ից: Գրողը դիմադրում է, փորձում հիմնավորել իր տեսակետը: Ի վերջո ասում է. «Այդ վեպը գրված է ձեր զավակների եւ թոռների համար, 50 տարի հետո նրանք ինձ կգնահատեն»:

«Բանավեճի» մասնակիցներից մեջլիսական Զահիդ Օրուջը գրողին հարց է ուղղում. «Մի՞թե ադրբեջանցիներն այնքան գազանաբարո են, որքան դուք եք պատկերել»: Այլիսլին փորձում է բացատրել, որ «ծեր հային փրկող ադրբեջանցին է վեպի գլխավոր հերոսը»: Անօգուտ: Ինկվիզիտորները, միմյանց հերթ չտալով, նրան դատափետում են «իրականությանը չհամապատասխանող փաստեր նկարագրելու» մեջ:

Գազանաբարո՞ են ադրբեջանցիները, թե՞ խաղաղասեր-հանդուրժողական՝ մեր խնդիրը չէ: Աչքի է զարնում, սակայն, այս բովանդակությամբ տեղեկատվություն. «Իշխանամետ «Ժամանակակից մուսավաթ» կուսակցությունը որոշել է 10 000 մանաթ պարգեւ վճարել նրան, ով կկտրի գրող Աքրամ Այլիսլիի՝ «Քարե երազներ» վեպի հեղինակի ականջը» (տես՝ http://www.contact.az/docs/2013/Social/021100027902ru.htm#.URizux1qgeo):

«Թուրան» գործակալությունը մեկնաբանություններ ստանալու համար դիմել է կուսակցության առաջնորդ Հաֆիզ Հաջիեւին, որը հաստատել է տեղեկատվության իսկությունը: «Անցյալ շաբաթ մենք քննարկում ենք անցկացրել եւ կայացրել նման որոշում: Դա հաստատուն է եւ փոփոխության չի ենթարկվի»,- ասել է Հաջիեւը: Հարցին, թե կուսակցության որոշման մեջ ի՞նչ է կոնկրետ ասված, «արդի-մուսավաթականը» հետեւյալ պատասխանն է տվել. «Այլիսլին իր վեպում վիրավորել է ծագումով «Արեւմտյան Ադրբեջանից ժամանակակից Հայաստանից» (չակերտները մերն են - Վ. Ա.) 4,5 մլն մարդու, նրանց ներկայացրել իբրեւ վայրենիների: Դրա համար որոշում է ընդունվել, որ Այլիսլիին տրված բոլոր պատիժները չնչին են, հարկ է կտրել նրա ականջը: Որոշման կատարումը հանձնարարվել է կուսակցության երիտասարդական թեւի ներկայացուցիչներին: Այդ որոշումը կատարողին կտրվի 10 000 մանաթ պարգեւավճար»:

Ընդգծենք, որ կանիբալիստական որոշումն ընդունել է ոչ թե ինչ-որ մի «խոցված փախստական» կամ «ցեղասպանության զոհ» խոջալուցի, այլ Ադրբեջանում օրինական գրանցում ստացած եւ լեգալ քաղաքական գործունեությամբ զբաղվող կուսակցություն: Վկայո՞ւմ է նման որոշումը «Ժամանակակից մուսավաթ» կուսակցության գազանաբարո վարքը, թե՞ ոչ: Հարցին թող պատասխանի Միլլի մեջլիսի պատգամավոր Զահիդ Օրուջը:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

## Զարաֆոլուն համերաշխության կոչ է անում Թուրքիայի եւ Ադրբեջանի հասարակայնությանը

*1-ին էջից*

Հիմա նրա տան առջեւ մոբիլիզացրել են Լինչի դատաստան տենելու պատրաստ զանգվածներին, որոնց ժամանակին մենք տեսել էինք Մարաշում եւ Սվազում: Հիմա նրանք «Կացինդ վերցրու ու արի» կարգախոսով կանչում են Ռամիլ Սաֆարովին, որը 2004-ին Բուդապեշտում կացնով գլխատել էր ՆԱՏՕ-ի դասընթացներին մասնակցող հայ սպա Գուրգեն Մարգարյանին:

Ինչ վերաբերում է պատգամավոր Մելահաթ Իբրահիմգիզիին, որը 2009-ին հայ-թուրքական արձանագրությունների ստորագրումից հետո, շտապելով Անկարա, կարողացել էր սաբոտաժի ենթարկել Հայաստան-Թուրքիա հարաբերությունների նորմալացումը, Ադրբեջանի խորհրդարանում ունեցած ագրեսիվ ելույթով, թե Այլիսլին անարգում է ոչ միայն ադրբեջանցիներին, այլեւ թյուրքական ողջ ժողովուրդներին, ջանում է Թուրքիա փոխադրել Լինչի դատաստանի այդ արշավը: Նույնիսկ Ադրբեջանի խորհրդարանը կարողանում է քննարկել գրողին քաղաքացիությունից զրկելու, նրան ԴՆԹ թեստ անելու հարցը:

Այս ամենի պատճառը Այլիսլիի վերջին վիպակի հրապարակումն է ռուսական «Դրուժբա նարոդով»-ում: Վիպակը ադրբեջաներեն չի հրապարակվել, սակայն վիպակին մամուլի արձագանքները բավական էին, որ Բաքվում զայրացած ամբոխը հավաքվի Այլիսլիի տան առջեւ «դավաճան», «անամոթ» բացականչություններով այրի նրա լուսանկարներն ու գրքերը:

Նա վիպակում պատմում է հայ հարեւաններին էթնիկ բռնությունից փրկելու փորձ անող երկու ադրբեջանցիների մասին, որտեղ խղճմտանքով, ինքնաքննադատության շրջանակում, անդրադառնում է նաեւ Սումգայիթի ու Բաքվի հայերի ջարդերին: Հեղինակը 2007-ին էր ավարտել վիպակը, սակայն հրատարակեց 5 տարի ուշացումով միայն, այն էլ՝ ռուսերեն:

Գրեթե նույն թվին հայ գրողներից մեկն էլ խղճմտանքի տեսանկյունից անդրադարձել էր հայ-ադրբեջանական բախումներին եւ արժանացել Ադրբեջանի Հանրապետության մրցանակին: Նա այդ մրցանակը ստանալու, այլ ոչ թե պատմվածքը գրելու համար՝ բախվել էր Հայաստանի գրողների միության հակազդեցությանը, եւ ի նշան բողոքի, հրաժարվել էր անդամակցությունից: Բայց եւ այնպես նրա դեմ ատելության արշավներ, ինչպես ներկայումս Բաքվում է կազմակերպվում, չեն կազմակերպվել:

Ես Թուրքիայի եւ Ադրբեջանի ժողովրդավարական հասարակություններին Այլիսլիի հետ համերաշխության կոչ եմ անում, որպեսզի հնարավոր լինի կանխել նմանատիպ սպանությունը, որի զոհը դարձավ Հրանտ Դինքը»:

## Վարչապետ Էրդողանը խոստանում է լուծել քրդական հարցը

### *Առանց, իհարկե, պարզաբանելու, թե ինչ է ենթադրում լուծումը*

Փետրվարի 10-ին Կեսարիայում Թուրքիայի վարչապետ Էրդողանը հանդիպել է քաղաքացիական հասարակության կազմակերպիչների ներկայացուցիչներին: Հանդիպումը եղել է դռնփակ: Այդուհանդերձ «Դունիա բուլթենի» լրատվական գործակալությունը տեղեկացրել է, որ Էրդողանը ներկաներին պարզաբանումներ է տվել Քուրդիստանի աշխատավորական կուսակցության՝ PKK-ի առաջնորդ Աբդուլլա Օջալանի հետ վերջինի կալանավայր Իմրալի կղզում ծավալվող բանակցությունների մասին:

Որքան հայտնի է, թուրքական պետական կառույցներն այդ բանակցությունները վարում են Օջալանի միջոցով PKK-ականների զինյալ պայքարին վերջ տալու, այլ ոչ թե քրդական հարցը կարգավորելու նկատառումով: Չնայած դրան, վարչապետ Էրդողանը պարզաբանումներ անելիս հենց այդ հարցն է նկատի ունեցել: Նա, ըստ թուրքական կայքէջի, ակնարկելով այդ հարցի մասին, ասել է. «Իմրալիում ծավալվող բանակցային գործընթացը, ինչպես յուրաքանչյուր քաղաքում, այնպես էլ Կեսարիայում, լուրջ աջակցություն է գտնում: Մեծ հույսեր ունենք: Այս հարցի կարգավորման դեպքում կշահեն բոլորը: Դուք էլ ավելի հանգիստ կշարունակեք ձեր գործունեությունը: Ամեն կերպ աշխատելու եմ կարգավորել այս հարցը թեկուզ իշխանությունից հեռանալու գնով: Հարցի առնչությամբ անելու եմ այն, ինչ իմ հնարավորության սահմաններում է»:

Ի դեպ, PKK-ի հետ ծավալվող բանակցություններին, Վաշինգտոնում «Միլիեթի» թղթակցի վկայությամբ, աջակցում է նաեւ ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման: Ահա թե ինչ է ասել. «Ես ողջունում եմ Թուրքիայի բնակչությանը ավելի քան 30 տարի վիշտ ու ցավ պատճառած կռիվներին խաղաղ լուծում տալու վարչապետ Էրդողանի ջանքերը: ԱՄՆ-ը շարունակելու է կոնկրետ քայլերով զորավիգ լինել բանակցային գործընթացին»:

Ինչպես կարձագանքի Օջալանը PKK-ի զինյալ պայքարը իր միջոցով դադարեցնելու թուրքական իշխանությունների պահանջին, Հյուսիսային Իրաքի կենտրոնական Ղանդիլը կամ քրդական կազմակերպության եվրոպական կառույցները ինչ վերաբերմունք ցույց կտան բանակցությունների արդյունքում ընդունված որոշմանը՝ չգիտենք: Սակայն ակնհայտ է, որ թուրքական կողմի համար երկրում կա PKK-ի խնդիր, իսկ քրդերի՝ քրդական հարց, եւ վերջիններս զինադադարի նախապայման են համարում տեղական ինքնակառավարումը, որը ճանապարհ է դեպի «Հյուսիսային Քուրդիստանի» ինքնավարության՝ անկախացման հեռագնա նպատակով:

Հ. ՉԱՔՐՅԱՆ

### *ԱՄԵՐԻԿՅԱՆ ՄԱՄՈՒԼ*

## Իրանն ու «Հզբոլլահը» Սիրիայում աշխարհազոր ունեն

### *Ընդդիմության առաջնորդն առաջարկեց բանակցություն, որպեսզի Ասադը հեռանա*



**Իրանի վարչակարգը եւ Լիբանանի շիա արմատականների «Հզբոլլահ» խմբավորումը Սիրիայում զինված ջոկատներ են ստեղծել սեփական շահերի պաշտպանության նպատակով: Այդ մասին հաղորդում է «Վաշինգտոն փոստ» թերթը, վկայակոչելով ամերիկյան եւ մերձավորարեւելյան աղբյուրներ:**

**Թերթի տվյալներով, նման ջոկատներից կազմված աշխարհազորի թվակազմը մոտավորապես 50 հազար է:**

**Այդ զինված կազմավորումները ստեղծվում են նախագահ Բաշար Ասադին պաշտպանելու եւ սիրիական ընդդիմությանը հակազդելու նպատակով: Մյուս նպատակը Իրանի շահերի պաշտպանությունն է ի դեպս Ասադի վարչակարգի անկման եւ հակամարտ համայնքների կողմից Սիրիայի տարածքի վերահսկողության հաստատման:**

**Նշվում է, որ Սիրիայում կառավարող ալավի փոքրամասնությունը հավատարիմ է իր առաջնորդ Բաշար Ասադին: Անխախտ է մնում վարչակարգի դաշինքը նաեւ քրիստոնյաների հետ, որոնք վախենում են, որ ընդդիմության հաղթանակը կհանգեցնի իսլամիստ ծայրահեղականների տերուտնօրինությանը: Դրուզներն աստիճանաբար անցնում են ընդդիմության կողմը: Քուրդ փոքրամասնությունը պահպանում է չեզոքություն եւ նախընտրում է ապահովել իր ինքնավարությունը: Ընդդիմությունը հիմնականում կազմված է սուննի մեծամասնությունից, որը մասնատված է: Առանձին խումբ են կազմում պաղեստինյան գաղթականների արաբները, որոնց մեծամասնությունը սուննի մահմեդական է: Ըստ «Վաշինգտոն փոստի», Սիրիայի էթնիկական եւ կրոնական գրեթե բոլոր խմբերը հույս են դնում օտարերկրյա օգնության վրա:**

**Իրանը եւ «Հզբոլլահը» եռանդագին աջակցում են ալավիների «Ջաիշ ալ Շաբի» աշխարհազորին, ապահովելով դրամով, զենքով եւ Իսլամական հեղափոխության պահապանների հրահանգիչներով: Թերթը կարծում է, որ Սիրիայի մասնատման դեպքում վարչակարգի մնացուկները կտեղափոխվեն ալավիների բնակության տարածք՝ Լաթաքիայի շրջան եւ կշարունակեն կապ պահպանել Թեհրանի հետ, նշում են փորձագետները (Սիրիայի մասնատման հնարավոր հետեւանքներին «Ազգն» անդրադարձել էր դեռ անցյալ տարի):**

**Սիրիական ընդդիմության՝ Ազգային կոալիցիայի առաջնորդ Մոազ ալ Խաթիբը երեկ վերստին հանդես է եկել Ասադի վարչակարգի հետ բանակցելու կոչով: Ռոյթեր գործակալությունը մեջբերում է Խաթիբի այն հայտարարությունը, որ ընդդիմադիրներն ուզում են բանակցություն վարել Սիրիայում իրենց վերահսկողությանը ենթակա հյուսիսային մասում, որպեսզի «նվազագույն արյունահեղությամբ» ապահովեն Ասադի պաշտոնաթողությունը:**

## Վաշինգտոնը կառաջարկի կիսով չափ կրճատել միջուկային զենքը

### *Մերժման դեպքում կզինաթափվի միակողմանիորեն*

**ԱՄՆ-ը Ռուսաստանին կառաջարկի կիսով չափ կրճատել միջուկային սպառազինությունը եւ թողնել մոտ հազար մարտագլխիկ: Այդ մասին հաղորդում է մոսկովյան «Կոմերսանտ» թերթը, վկայակոչելով նախագահ Բարաք Օբամայի վարչակազմի աղբյուրներ: Թերթի տեղեկությունների համաձայն, կրճատման առաջարկությունը կարվի պետքարտուղարի տեղակալ Ռոուզ Գետեմյուլլերի՝ փետրվարի 12-ին սկսվող մոսկովյան այցելության ժամանակ:**

**Սպառազինությունները կիսով չափ կրճատելու գաղափարը հիմնվում է պետդեպարտամենտի մասնակցությամբ պատրաստված գաղտնի զեկուցագրի վրա: Փաստաթղթի համահեղինակներն են Պենտագոնը, Ազգային անվտանգության խորհուրդը եւ ԱՄՆ ռազմավարական հրամանատարությունը: Այն արդեն ներկայացվել է նախագահ Օբամային: Փաստաթղթում խոսվում է ամերիկյան ռազմավարական ուժերի թիրախների մասին: Այդ թիրախների ցանկից հանվել են Իրաքը եւ Սիրիան, բայց մնում են Ռուսաստանը, Չինաստանը, Իրանը եւ ԿԺԴՀ-ն:**

**Զեկուցագրի հեղինակները կարծում են, որ հնարավոր թիրախներ պետք է լինեն ռազմական եւ տնտեսական օբյեկտները, այլ ոչ թե երկրների ղեկավարությունը, ինչպես ներկայումս գործող ռազմական դոկտրինայում է: Առաջարկվող տարբերակի դեպքում Վաշինգտոնը կարող է ունենալ ընդամենը 1000-1100 մարտագլխիկ: Ներկայումս գործող Ռուսաստան-ԱՄՆ համաձայնագիրը կողմերից յուրաքանչյուրին հնարավորություն է տալիս ունենալու մինչեւ 1900 մարտագլխիկ:**

**Սպիտակ տան աղբյուր վկայակոչելով՝ «Կոմերսանտը» տեղեկացնում է, որ Մոսկվայի բացասական պատասխանի դեպքում Վաշինգտոնի վարչակազմը կջանա ստանալ սենատորների 2/3-ի աջակցությունը եւ սպառազինության կրճատում սկսել միակողմանի կարգով:**

**Ռուսաստանը եւ ԱՄՆ-ը ռազմավարական սպառազինությունների կրճատման 3-րդ պայմանագիրը ստորագրեցին 2010 թ. գարնանը: Փաստաթուղթը կողմերից յուրաքանչյուրին պարտավորեցնում է մինչեւ 2018 թվականը մարտագլխիկների թիվը իջեցնել 1550-ի, սակայն հաշվարկման համակարգի առանձնահատկությունը հնարավորություն է տալիս դրանց թիվը հասցնել մինչեւ 1900-ի:**

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԵՐԱԺՇՏԱՍԵՐ

# Մեկնարկում է «Ուսանողականի ֆիլհարմոնիա» նախագիծը

Փետրվարի 13-ին Առնո Բաբաջանյան համերգասրահում տեղի կունենա «Ուսանողականի ֆիլհարմոնիա» նախագծի հանդիսավոր բացումը, որի նպատակն է հայ երիտասարդության շրջանում նրբաճաշակ եւ բարձրորակ երաժշտությունը ճանաչելի եւ սիրելի դարձնել:

«Ուսանողական ֆիլհարմոնիայի» բացման հանդիսությանը ելույթ կունենա Հայաստանի պետական երիտասարդական նվագախումբը:

Ուսանողական ֆիլհարմոնիայի նպատակն է, որպեսզի համերգները վերածվեն դասերի եւ յուրաքանչյուր դաս-համերգի ընթացքում բանախոսը կներկայացնի, կմեկնաբանի ստեղծագործության յուրաքանչյուր հատված: Ուսանողական ֆիլհարմոնիա նախագծի գաղափարը ծագել է տարիներ առաջ, սակայն այսօր այն այլեւս իրականություն է:

Դասական երաժշտությունը մնայուն արժեք է, որը փոխանցվում է սերնդեսերունդ, ինչի ապացույցն է մեր դասական երաժշտության մշակութային ժառանգությունն ու հարստությունը: Ժառանգորդման շղթան չխափանելու նպատակով երիտասարդներին պիտի ճանաչելի եւ սիրելի դարձնենք դասական երաժշտությունը: Եվ ահա Հայաստանի Ֆիլհարմոնիայի եւ Հայաստանի երիտասարդական նվագախմբի նպատակները համընկան ուսանող-երիտասարդությանը ընդգրկել բարձրաճաշակ երաժշտության ունկնդրմանը:

Նախագիծը կրելու է շարունակական բնույթ:

Մուտքն՝ անվճար:

«Ուսանողական ֆիլարմոնիա» նախագիծն անցկացվում է ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ:

Մ. Հ.

# Հայագետ դոկտ. Ջոն Գրեփինի հայկական հատորների հավաքածուն՝ ՆԱԱՍՐ-ին

Հայկական ուսումնասիրությունների եւ հետազոտությունների ազգային ասոցիացիայի (NAASR) «Էդուարդ եւ Հելեն Մարտիկյան» գրադարանը վերջերս հարստացել է լեզվաբան, հայագետ Ջոն Գրեփինի հեղինակած հատորների նշանակալի նվիրատվությամբ, տեղեկացնում է «Արմինյն միրոր-սփեքթեյթր» շաբաթաթերթը:

Գրեփինը երկար տարիներ դասավանդել է Կլիվլենդի պետհամալսարանում: 2011 թվականին պատվավոր պրոֆեսորի աստիճանին է արժանացել: Գրաբարի մասնագետ է եւ հեղինակ է 15 մենագրությունների: 1980 թվականից 25 տարիներ շարունակ խմբագրել է «Հայկական լեզվաբանության տարեգիրքը»: Նրա հայկական հատորների հավաքածուն բաղկացած է 900 վերնագրերից: Դրանց մեծ մասը նա ձեռք է բերել, ըստ լրատվության, Երեւանում ապրած տարիներին (1974-75 թթ.) եւ հետագայում՝ Օհայոյում բնակվելիս: Դրանց թվում են «Տեղեկագիր» (հետագայում՝ «Լրաբեր»), «Պատմա-բանասիրական հանդես» պարբերականները եւ «Հայկական համաբարբառ» արժեքավոր հատորները:

«Այդ հաստատության հետ ես 37 տարի համագործակցել եմ եւ վստահ եմ, որ այնտեղ այդ գրքերը լավագույնս կծառայեն իրենց նպատակին», ասել է Գրեփինը նվիրատվության առթիվ:

Հայկական ուսումնասիրությունների ազգային կենտրոնի ակադեմիական հարցերի գծով տնօրեն Մարկ Մամիկոնյանը շնորհակալություն է հայտնել պրոֆեսորին իր առատաձեռն նախաձեռնության համար եւ վստահեցրել, որ հաջորդ սերունդները կօգտվեն այդ գրքերից:

Գրադարանը անվանակոչված է Բլումֆիլդ Հիլզից (Միչիգան) բարերարներ Էդուարդ եւ Հելեն Մարտիկյանների անունով եւ պարունակում է ավելի քան 25 հազար հատորներ եւ բազմաթիվ թերթերի հավաքածուներ: Գրադարանից օգտվելու համար խորհուրդ է տրվում այցելել **www.naasr.org** կայքը:

Հ. Ծ.

# Հայկական ֆիլմը՝ Սոչիի միջազգային կինոփառատոնի դափնեկիր

Հայկական «Լուռ երկխոսություն» կինոնկարը երեկ Սոչիի կարճամետրաժ ֆիլմերի միջազգային կինոփառատոնում արժանացել է երրորդ տեղին:

Նշենք, որ հայազգի կինոռեժիսոր Էմար Տոուշի Ֆիլմը ռեստորանում ճաշող երկու զույգերի վերաբերյալ հետաքրքրական նովել է: Չսիրելով զուգընկերոջը՝ հերոսներից յուրաքանչյուրը երջանկանալու իր հույսը կապում է դիմացի սեղանի շուրջ նստածի հետ: Ըստ էության, ֆիլմը կեղծված սիրո եւ դրանից բխող դավաճանության պահանջի մասին է:

«Լուռ երկխոսություն» ֆիլմը կարելի է դիտել հետեւյալ հղումով.

**http://www.youtube.com/watch?v=thOwiPDmyIc**

ԱՐՄԵՆ ԱՀԱՐՈՆՅԱՆ
«Հայկական կինոյի զարթոնք» ՀԿ նախագահ

# Մեծ ներդրում ռուս մշակույթի գանձարանում

## *Հասմիկ Պապյանի Լիզան Վիեննայի Շտատսօպերի բեմում*

***Մեծ բեմերի նրա ունկնդիրը, ներկայացումից թեւեր առած, արձակուրդի նոր հացքե է բացահայտում՝ գնանք տեսնենք այն երկիրը, որի ձայնն այսքան սիրտ է շարժում, որի 5 մայրցամաք «նվաճած» բեմական կենսագրությունը «վրեժ» է լուծել իր փոքրացած հայրենիքի համար, դառնալով դուռ ու գինանշան ունեցող երկրի լավագույն թալիսման: Աշխարհագրական մեծ տարածքներից սերող իր մարմնավորած կերպարներին բնական առոգանություն ու շունչ հաղորդած Հասմիկ Պապյանը, հայտնի է, ամենամեծ ուրախությունն է ապրում, երբ իրեն հացեագրված մամուլի գովեստի մեջ շեշտված է տեսնում Հայաստան անունը:***

***Տարբեր դերակատարումներով Վիեննայի Շտատսօպերի բեմ է բարձրացել 60-ից ավել անգամ: 2013-ի հունվարի 19, 23, 27, 30-ին այս պատվավոր թատրոնում նրան էր վստահվել կերտել Լիզայի դերերգը Չայկովսկու «Պիկովայա դամայում»: Նրանք, ովքեր դիտել են Փարիզի Բաստիլ օպերայի 2007-ի բեմադրության DVD տարբերակը, որտեղ Պապյանի Լիզան ամբողջանում է Գալուզինի Հերմանի հետ, կարող են փաստել, որ այս դերակատարումը Հասմիկ Պապյանի մեծ ներդրումն է ռուս մշակույթի գանձարանում: Հասմիկը հիմա նոր դեր է սովորում, ուստի բավարարվենք վերջին բեմելի առիթով նրան մի քանի հարց ուղղելով:***

- «Պիկովայա դաման» ինձ համար շատ ծանր, յուրահատուկ հիշողությունների հետ է կապված: Առաջին անգամ 2002-ին Տորոնտոյում պիտի երգեի: Կանադայում էի մայրիկիս, Սիրանույշիս հետ: Պրեմիերայից առաջ 3 օրով գնացի անկողնուն գամված հայրիկիս տեսնելու, հրաժեշտ տալու: Շատ ծանր հիշողություններ են: Այս ստեղծագործությունը նաեւ շատ հոգեհարազատ է՝ որպես ռուսական մշակութային գանձ. ամեն դեպքում մեծացել ենք ռուսական հարուստ մշակույթի, ավանդույթների ազդեցության տակ: Այդ իմաստով ինձ համար բացառիկ դերերգ է:

**- Ձեր խաղընկեր Հերմանները տարբեր մեծության աստղեր են եղել՝ Մադրիդում՝ իսպանացի Պլասիդո Դոմինգոն, Փարիզի Բաստիլում՝ ռուս Վլադիմիր Գալուզինը, Վիեննայում՝ ամերիկացի Նեյլ Շիքոֆֆը: Իհարկե ազգային մշակույթը ներկայացնելու համար այդ լեզվի կրող, այդ ոգին ընկալող Գալուզինն երեւի անմրցակից է, բայց ի՞նչ կարծիք ունեք Ձեր ամերիկացի խաղընկեր Շիկոֆֆի մասին: Հասկանում, լրացնու՞մ է Ձեզ:**

- Այդ դերում իհարկե Գալուզինն անփոխարինելի է ինձ համար: Նա բացառիկ երեւույթ է ընդհանրապես, բնածին տաղանդ ունի թե՛ խաղալու, թե՛ երգելու: Սիբիրից է, իր ռուսական հոգով, ոգով... անփոխարինելի խաղընկեր է: Գալուզինի հետ բացի «Պիկովայա դամայից», «Տոսկա» եմ երգել, բազմաթիվ «Աիդաներ», իր հետ «Լա Սկալայում» երգել եմ Մուսորսկու «Խովանշչինայում»: Գալուզինն անկրկնելի է: Իհարկե լեզուն շատ կարեւոր է: Շիքոֆֆը շատ գեղեցիկ ձայն ունի, շատ մեծ փորձառություն, բայց արդեն 63 տարեկան է: Իհարկե Հերման երգելը շատ դժվար է, սա համարվում է ռուսական Օթելլո, բայց ներկայացման մեջ ինձ պակասում է ռուսերեն բառի արտասանությունը: Բոլորն էլ սովորել, մեծ ջանք են թափել, չեմ կարող ուրանալ, բայց բոլորովին տարբեր է, երբ երգիչն այդ լեզվի կրողն է: Մադրիդում Կոմսուհու դերերգը կատարում էր Ելենա Օբրազցովան, Բաստիլում՝ Ելենա Բոգաչյովան, իսկ Վիեննայում՝ Գրեյս Բամբրին: Նա մեծ երգչուհի է, մեծ հետք է թողել օպերային արվեստում, բայց իհարկե Օբրազցովայի կամ Իրինա Բոգաչյովայի հետ չես համեմատի, թեպետ իհարկե 79 տարեկանում նոր դերերգ սովորելը շատ մեծ հերոսություն է, մանավանդ՝ ռուսերեն: Իսկ ամենաառաջին Կոմսուհին Ջուդիթ Ֆոստերն էր, որ հայտնի մեցցոսոպրանո է: Այստեղ լեզվի իմացությունը շատ կարեւոր է:

**- Լեզվի միջոցով կերպարը լիովին զգալու խնդիրը կա:**

- Այդ մելամաղձը, այդ տխրությունը, այդ ողբերգությունը, մարդկային այդ հոգեբանությունը: Պիտի երկիրը ճանաչես, այդ երկրի մարդկանց, պատմությունը իմանաս անցյալից մինչեւ այսօր: Այս ստեղծագործությունն այսօր էլ շատ արդիական է, չի սպառում իրեն:

**- Արդիական հենքն է նաեւ բուլղար բեմադրիչ Վերա Նեմիրովային հուշել ժամանակակից բեմադրություն իրականացնել:**

- Փոխադրված է հետխորհրդային ժամանակաշրջան, փորձել են ցույց տալ հետխորհրդային Ռուսաստանի թերությունները: Գաղափարը լավն է, բայց արտահայտչամիջոցներն աղքատ են, որովհետեւ դա այնքան մեծ գիտելիք է պարունակում իր մեջ: Բուլղարացի ռեժիսորը բավականին հետաքրքրական գործեր ունի, բայց սա 50:50 է, հաջողված համարել չեմ կարող, որովհետեւ անտպառ երեւակայությունը, գիտելիքները, կյանքի փորձը բեմ բերելու առիթ կար, ու կարծում եմ, բոլորովին չի հաջողվել իրականացնել:

**- Հասմիկ, Ձեզ միշտ ոգեւորում է մամուլի քննադատականներում առկա «հայ երգչուհի», կամ «Հայաստանում ծնված երգչուհի» արտահայտությունը: Այս անգամ էլ շատ հուզվել էիք, ավստրիական մամուլում Լիզայի բարձրորակ Ձեր կատարման գնահատականում գտնելով այդ շեշտվող, անփոխարինելի բաղադրիչը: Սա օտարներին ուղղորդու՞մ է մեր երկիրը ճանաչելու:**

- Դա է իմ ուրախության միակ առիթը: Նախեւառաջ ասեմ, որ հայերին այդքան էլ չի հաջողվում այսպիսի բարձր բեմեր նվաճել այսպիսի դերերգով, իսկ չկամների մեջ հարց է արթնանում՝ ինչո՞ւ պիտի հայ երգչուհին ռուսական օպերա երգի:

**- Այն պարագայում, երբ աշխարհում քիչ չեն ռուս սոպրանոները:**

- Սա ինձ համար հաղթանակի մի մասն է այն պարագայում, երբ քննադատն ասում է սլավոնական ձայն՝ հրաշալի առոգանությամբ: Իհարկե հաճոյախոսություն եմ համարում. իտալական օպերաներ կատարելիս համարվում է իտալական՝ վերդիական ձայն, երբ երգում եմ ռուսական՝ սլավոնական է ընկալվում, սրան հավելած՝ «հմայիչ հայուհի » արտահայտությունը:

**- Դուք Վիեննայի Շտատսօպերում 7-րդ դերերգով եք բեմ բարձրանում: Շտատսօպերը մի բեմ է, ուր պատահական արտիստներ չեն լինում: Ասում եք շատ լավ ձայներ ունենք, բայց որքան հետեւում եմ, այսպիսի բարձրակարգ բեմերում նրանց չեմ գտնում: Վիեննայում ապրելով Դուք ավելի լավ գիտեք՝ Վիեննայի Շտատսօպերն ո՞ւմ է հյուրընկալում, ովքե՞ր են հայերից երգել այս բեմում:**


*Հասմիկ Պապայանը՝ Գրեյս Բամբրիի հետ թեւանցուկ:*

- Հայերից այստեղ շատ են երգել Սոնա Ղազարյանը, Կարպիս Բոյաջյանը, Թումաճյանը: Գիտեք, այսօր Վիեննայում նաեւ շատ անարժան երգիչներ են երգում, դա էլ է լինում: Ինչպես ամեն տեղ, այստեղ էլ դրամը պակասել է, եւ երիտասարդ անփորձ երգիչներին շատ քիչ են վճարում եւ օգտագործում: Եվ հակառակը՝ 79 տարեկան երգչուհին՝ Գրեյս Բամբրին, որի ձայնն արդեն դուրս չի գալիս, չի կարող փայլել, այս բեմում է, իսկ դա մյուս կողմից վատ չէ այն տեսակետից, որ ավանդույթներն են պահպանվում: Այնպես որ չեմ կարող ասել, թե չկան հայ արժանի երգիչներ, որ կարող են երգել այս բեմում, վստահ եմ՝ կան, բայց երգիչների՝ կազմ ընդգրկելու քաղաքականությունը, նաեւ՝ շատ տարբեր գործոններ կան, որ այսօր դժվար է ասել՝ ով է լավ երգիչ: Չափանիշները մի քիչ փոխվել են:

**- 2012-ի նոյեմբերի 25-ին Լայպցիգի Գեվանդհաուսում՝ ճանաչված ու հայերիս համար նաեւ նվիրական մի համերգասրահում, ուր Օհան Դուրյանի ոտնահետքն ու շունչը կա, երգեցիք մեզանում գրեթե անծանոթ Յանաչեկի «Գլագոլիտյան պատարագը»: Այս ստեղծագործությունն ընդհանրապես հազվադեպ է կատարվում:**

- Սա մի նոր փայլ էր ինձ համար: Այս պատարագն իսկապես շատ հազվադեպ է երգվում, թեպետ ստեղծագործությունն այնքան ժամանակակից է, կարծես երեկ է գրվել: Կարող էր նաեւ մեկ դար առաջ գրված լիներ, միեւնույն է՝ Ժամանակին համահունչ է:Համամարդկային է: Բացառիկ ստեղծագործություն է: Այնքան կուզենայի, որ այս ստեղծագործությունը Հայաստանում հնչեր, անընդհատ մտածում էի, որ Հայաստանի ակադեմիական երգչախումբը, մաեստրո Չեքիջյանը պիտի ուզենար իր հազարից ավելի ստեղծագործությունների կողքին կատարել նաեւ Յանաչեկի պատարագը: Իհարկե նվագախմբի կազմը շատ մեծ է, հարուստ, դժվար է իրագործել, բայց ցանկության դեպքում կարծում եմ կարելի է դա կատարել Հայաստանի հանդիսատեսին հոգեպես, բարոյապես հարստացնելու մեծ նպատակի համար:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

ԱԶԳ

# Մարզական

## Արթուր Ղարագյոզյանը մրցանակային եռյակում

Մոսկվայում վերջնագիծը հատեց շախմատային փառատոնը, որի տարբեր մրցաշարերում հանդես եկան Հայաստանի 16 շախմատիստներ: Նրանցից բոլորից հաջողը C խմբի մրցաշարի մասնակից Արթուր Ղարագյոզյանի ելույթն էր, որը 9 հնարավորից վաստակած 7,5 միավորով զբաղեցրեց 3-րդ տեղը: Վերջնագծում Արթուրը բավականին հաջող հանդես եկավ: Նա նախ հաշտություն կնքեց Ալեքսանդր Կուզմիչյովի հետ, ապա պարտության մատնեց Ալեքսեյ Բելեցկուն եւ Վլադիմիր Տարիրովին: Ղարագյոզյանը մրցաշարն անցկացրեց առանց պարտության: Նա տոնեց 6 հաղթանակ, 3 պարտիա ավարտեց ոչ-ոքի:



C խմբի մրցաշարի հաղթող ճանաչվեց ռուսաստանցի Նիկիտա Խորոշիլովը, որը վաստակեց 8 միավոր եւ լրացուցիչ գործակիցներով առաջ անցավ նույնքանի արդյունք ցույց տված իր հայրենակից Իվան Ուրաեւից:

C խմբում հանդես եկած հայաստանցի մյուս շախմատիստներից 2-րդ արդյունքը ցույց տվեցին Տիգրան Ազարյանն ու Առնոլդ Մինասյանը, որոնք վաստակեցին 5,5-ական միավոր: 5 միավոր վաստակեց Վահագն Խաչատրյանը, 4,5՝ Հարություն Բարսեղյանը:

Կանանց մրցաշարում վատ հանդես չեկավ գրոսմայստեր Լիլիթ Գալոյանը, որը 6,5 միավորով գրավեց 14-րդ տեղը: Լիլիթն էլ վերջնագծում հաջող խաղաց: Նա հաղթանակներ տոնեց Ալյոնա Բոգաչկովայի եւ Մարինա Բարաեւայի նկատմամբ, հաշտություն կնքեց Լանիսա Ստեցկոյի հետ:

Կանանց մրցաշարի հաղթող ճանաչվեց 7,5 միավոր վաստակած ռուսաստանցի Մարինա Ռոմանկոն: Նույնքանի արդյունքով 2-րդ տեղը գրավեց նրա հայրենակցուհի Տատյանա Խլիչկովան:

A խմբում հանդես եկած հայ շախմատիստներից լավագույնը Ռոբերտ Աղասարյանի եւ Հովհաննես Գաբուզյանի արդյունքն է, որոնք 6 միավորով զբաղեցրին համապատասխանաբար 22-րդ եւ 23-րդ տեղերը: Առանց պարտության հանդես եկած 19-ամյա Աղասարյանը լրացրեց գրոսմայստերի նորմա: 5-ական միավոր վաստակեցին Տիգրան Սիմոնյանն ու Դավիթ Պետրոսյանը, 4,5-ական՝ Մանուել Պետրոսյանն ու Հովիկ Հայրապետյանը: Իր օգտին 4 միավոր գրանցեց Դավիթ Շահինյանը, 3,5 միավոր վաստակեց Արման Միքայելյանը: Բոլորից անհաջողը Դավիթ Գեւորգյանի ելույթն էր, որը 9 հնարավորից վաստակեց ընդամենը 1 միավոր:

A խմբի մրցաշարի հաղթող դարձավ ռուսաստանցի Բորիս Սավչենկոն, որը վաստակեց 7,5 միավոր:

10 շախմատիստների շրջանաձեւ մրցաշարում թույլ հանդե եկավ հանրապետության նախկին չեմպիոն, գրոսմայստեր Ռոբերտ Հովհաննիսյանը, որը 3,5 միավորով գրավեց 8-րդ տեղը: Ռոբերտը 7-8-րդ տուրերում պարտություններ կրեց Ուրի Ելիսեեւից եւ Բուրակ Ֆիրատից, իսկ ավարտական տուրում ոչ-ոքի խաղաց Միխայիլ Մոզարովի հետ:

Մրցաշարի հաղթող դարձավ ռուսաստանցի Ուրի Ելիսեեւը, որը 9 հնարավորից վաստակեց 6 միավոր: 2-րդ եւ 3-րդ տեղերը գրավեցին Միխայիլ Մոզարովն ու Վլադիմիր Բելոուսը, որոնք հաղթողից հետ մնացին կես միավորով:

## Արոնյանը հանդես է գալիս «Բադեն-Բադենում»՝ նախապատրաստվելով Ստավանգերի գերմրցաշարին

Այս օրերին Լեւոն Արոնյանը «Բադեն-Բադենի» կազմում մասնակցում է Գերմանիայի բունդեսլիգայի շախմատի առաջնությանը: Լեւոնը հանդես է գալիս 1-ին խաղատախտակի վրա: 7-րդ տուրում «Բադեն-Բադենը» 5-3 հաշվով պարտության մատնեց «Բեռլինին»: Լեւոն Արոնյանը ոչ-ոքի խաղաց «Բեռլինի» առաջատար Հրանտ Մելքումյանի հետ: Հաջորդ տուրում «Բադեն-Բադենը» 6,5-1,5 հաշվով հաղթեց «Ֆորխհեյմին»: Արոնյանը պարտության մատնեց Միխայիլ Պրուսիկինին:

8 տուրից հետո «Բադեն-Բադենը» միանձնյա առաջատարն է՝ շահելով բոլոր մրցախաղերը: 2-րդ տեղում 15 միավորով «Սոլինգենն» է: Լավագույն եռյակը եզրափակում է 12 միավոր վաստակած «Մյուլհեյմը»: «Բեռլինը» 3 միավորով 13-րդ տեղում է:

Լեւոն Արոնյանը նախապատրաստվում է մայիսի 7-18-ը Նորվեգական Ստավանգեր քաղաքում կայանալիք շախմատի գերմրցաշարին, որն այս տարի առաջին անգամ է կազմակերպվելու: Մրցաշարին մասնակցելու են նաեւ Մագնուս Կառլսենը, Վլադիմիր Կրամնիկը, Թեյմուր Ռաջաբովը, Սերգեյ Կարյակինը, Վիշվանաթան Անանդը, Վեսելին Թոփալովը, Հիկարու Նակամուրան, Վան Հաոն եւ Յոն Լյուդվիգ Համերը:

## Ամենաերկարակյաց մարզիչն Ալեքս Ֆերգյուսոնն է

Ռումինական Prosport.ro-ն կազմել է ֆուտբոլային միեւնույն ակումբում բոլորից երկար աշխատած մարզիչների լավագույն հնգյակը: Այն գլխավորում է «Մանչեսթր Յունայթեդի» շոտլանդացի հանրահայտ մարզիչ Ալեքս Ֆերգյուսոնը: Նա թիմի ղեկը ստանձնել է 1986-ին եւ արդեն 27 տարի հաջողությամբ ղեկավարում է իր սաների գործողությունները: Նրա օրոք անգլիական ակումբը բազում նվաճումների է հասել:




Մարզչական աշխատանքի երկարակեցությամբ աչքի է ընկնում նաեւ Լոնդոնի «Արսենալի» գլխավոր մարզիչ Արսեն Վենգերը, որը թիմում է 1996-ից: 3-րդ տեղում Բրեմենի «Վերդերի» գլխավոր մարզիչ Թոմաս Շաաֆն է, որը թիմը գլխավորում է 1999-ից: 2001-ից Կազանի «Ռուբինի» հետ է աշխատում Կուրբան Բերդիեւը: Լավագույն հնգյակը եզրափակում է Դոնեցկի «Շախտյորի» ռումինացի մարզիչ Միրչա Լուչեսկուն: Նա «Շախտյորի» ղեկին է 2004-ից:

## 5 թիմեր մրցավարների հետ մեկնել են Անթալիա

Երեկ Երեւանից Անթալիա ուղեւորվեցին միանգամից 5 թիմեր՝ «Շիրակը», «Գանձասարը», «Փյունիկը», «Ուլիսն» ու «Ալաշկերտը»: Նրանց հետ միասին Անթալիա մեկնեցին նաեւ Հայաստանի բարձրագույն եւ առաջին խմբի առաջնությունների հանդիպումները սպասարկող մրցավարները, որոնք եւս ուսումնամարզական հավաք կանցկացնեն: Հավաքի ընթացքում նախատեսված են տեսական եւ գործնական պարապմունքներ, որոնք կվարեն ՀՖՖ մրցավարական բաժնի պետ Կարեն Նալբանդյանն ու ՀՖՖ տեսուչ Գեւորգ Հովհաննիսյանը:

Այսօր Անթալիայում իր առաջին ստուգողական հանդիպումը կանցկացնի «Փյունիկը», որը կմրցի Մոլդովայի գավաթակիր «Միլսամիի» հետ: 2 օր անց նույն թիմի հետ ուժերը կչափի նաեւ «Ուլիսը»:

«Շիրակը» փետրվարի 13-ին ստուգողական խաղ է անցկացնելու ռումինական «Վիտորուլի» հետ, որի սեփականատերը նախկինում հայտնի ռումինացի ֆուտբոլիստ Գեորգի Հաջին է: 3 օր անց «Շիրակը» կմրցի Չեռնոգորիայի «Եդինստվո» թիմի հետ: Փետրվարի 20-ին գյումրեցիների մրցակիցը կլինի ղազախական «Օրդաբասին», որին «Գանձասարը» Թուրքիայում պարտվել էր 0-4 հաշվով: Հավաքի վերջին խաղում՝ փետրվարի 24-ին շիրակցիները ուժերը կչափեն Ալչեւսկի «Ստալի» հետ:

«Շիրակի» կազմում Անթալիա են մեկնել նաեւ թիմին միացած մի քանի լեգեոնականներ՝ Սամուել Կյերեն, Ջորջ Օդիմբոն, Պրինց Նակեն: Անթալիայում «Շիրակի» կազմում փորձաշրջան կանցնի նաեւ սենեգալցի պաշտպան Ուեյդ Ջեյխը:

### ԲՌՆՑՔԱՄԱՐՏ

## Դարչինյան-Դոներ մենամարտը կրկին հետաձգվում է

WBA-ի վարկածով առաջին կիսաթեթեւքաշային կարգում աշխարհի ներկայիս չեմպիոն, կուբացի բռնցքամարտիկ Գիլյերմո Ռիգոնդոն ստորագրել է WBO-ի վարկածով քաշային նույն կարգում չեմպիոնական գոտու տեր, ֆիլիպինցի Նոնիտո Դոների հետ մենամարտ անցկացնելու վերաբերյալ պայմանագիրը: Այդ մենամարտը նախատեսվում է անցկացնել ապրիլի 13-ին ԱՄՆ-ում:

Այսպիսով, հերթական անգամ Վախթանգ Դարչինյանի մենամարտը Նոնիտո Դոների հետ հետաձգվում է անորոշ ժամկետով: Հիշեցնենք, որ օրեր առաջ ենթադրվում էր, թե Ռիգոնդոն կհրաժարվի Դոների հետ մենամարտելուց, քանի որ հերթական անգամ փոխում է իր մարզչին: Դոների ներկայացուցիչները որպես այլընտրանք նշել էին Դարչինյանի հետ մենամարտելու տարբերակը: Իր հերթին Վախթանգը սիրով էր ընդունել մարտահրավերը՝ հույս ունենալով ռեւանշի հասնել մրցակցի նկատմամբ:

## Հրաձիգներն աչքի ընկան դիպուկությամբ

60 հրաձիգներ վիճարկեցին Երեւանում անցկացված գնդակային հրաձգության Հայաստանի մեծահասակների առաջնության պարգեւները: 10 մ հեռավորությունից օդամղիչ հրացանով հրաձգությունում տղամարդկանց մրցումներում բոլորից դիպուկը Հրաչյա Բաբայանն էր, որն էլ արժանացավ չեմպիոնի կոչմանը: 2-րդ տեղը գրավեց Հայկազ Քանքանյանը, 3-րդը Սուրեն Բերյանն էր:

Նույն վարժության կանանց մրցումներում ուժեղագույնը Մարիամ Միքայելյանն էր: Մրցանակային հաջորդ տեղերը զբաղեցրին Իրինա Աղաջանյանն ու Սվետլանա Տիգրանյանը:

10 մետր վազող թիրախ՝ նորմալ վազք վարժությունում տղամարդկանց մրցումներում իր հավասարը չուներ Ռազմիկ Մինասյանը, որը դիպուկությամբ գերազանցեց 2-րդ եւ 3-րդ տեղերը զբաղեցրած Աշոտ Մելոյանին եւ Արթուր Պետրոսյանին:

Նույն վարժության կանանց մրցումներում չեմպիոնուհու տիտղոսին արժանացավ Լիլիթ Մկրտչյանը: 2-րդ եւ 3-րդ տեղերը գրավեցին Աննա Հակոբյանն ու Լաուրա Ավետիսյանը:

Ռազմիկ Մինասյանն ուժեղագույնն էր նաեւ 10 մետր վազող թիրախ՝ խառը վազք վարժությունում: Նրան հաջորդեցին Արթուր Պետրոսյանն ու Շանթ Սարգսյանը: Նույն մրցաձեւում կանանցից լավագույնն Աննա Հակոբյանն էր, որն այս վարժությունում առաջ անցավ Լիլիթ Մկրտչյանից: 3-րդ տեղը բաժին հասավ Լաուրա Ավետիսյանին:

10 մետր օդամղիչ ատրճանակով հրաձգությունում տղամարդկանցից լավագույնը Ռոմիկ Վարդումյանն էր: 2-րդ տեղը գրավեց Նորայր Առաքելյանը, 3-րդը Զավեն Իգիթյանն էր: Կանանց մրցումներում ուժեղագույնը Վրաստանի ներկայացուցիչ Նինո Սալուկվաձեն էր, որն առաջ անցավ Աստղիկ Ղուկասյանից եւ Մարիամ Բլուաշվիլուց:

Հրաձգության Հայաստանի հավաքականի ավագ մարզիչ Սեյրան Նիկողոսյանը գոհ էր մրցումներում ցույց տված արդյունքներից:

## Ղարաբաղցյանի գոլը միակն էր

Բաթումում ուսումնամարզական հավաքի իր առաջին հանդիպումն անցկացրեց Երեւանի «Արարատը»: Մրցակիցը Վրաստանի առաջին խմբի առաջնության մասնակից «Բեթլեմին» էր: Հանդիպման ելքը վճռեց արարատցի Տիգրան Ղարաբաղցյանի խփած միակ գնդակը: Ստուգողական հաջորդ հանդիպումն «Արարատը» կանցկացնի փետրվարի 14-ին:

## Նիգերիան Աֆրիկայի եռակի գավաթակիր

Նիգերիայի հավաքականն իր պատմության մեջ 3-րդ անգամ դարձավ Աֆրիկայի գավաթակիր՝ եզրափակիչում 1-0 հաշվով պարտության մատնելով Բուրկինա Ֆասոյի ընտրանուն: Հանդիպման ելքը վճռեց Սանդեր Մբայի խփած միակ գոլը:



Հետաքրքրական է, որ 2 հավաքականներն էլ նախնական փուլում ընդգրկված էին միեւնույն խմբում: Նրանց առաջին հանդիպումն ավարտվել էր ոչ-ոքի՝ 1-1: Այդ խաղում իր գոլերի հաշիվն էր բացել նիգերիացի Էմանուել Էմենիկեն, որը հանդես է գալիս Մոսկվայի «Սպարտակում»: Էմենիկեն 4 գնդակով ճանաչվեց մրցաշարի լավագույն ռմբարկու: Լավագույն ֆուտբոլիստի մրցանակը նվաճեց Բուրկինա Ֆասոյի խաղացող Ջոնաթան Պիտրոյպը:

## Ֆիլիպ Տիմովը փորձաշրջան կանցնի «Շալկե-04»-ում

Դիլիջանի «Իմպուլսի» մակեդոնացի կիսապաշտպան Ֆիլիպ Տիմովը Գերմանիայի բունդեսլիգայի մասնակից «Շալկե-04»-ի կողմից հրավեր է ստացել փետրվարի 25-ից մարտի 3-ը փորձաշրջան անցնելու թիմի կազմում: «Շալկե-04»-ը ներկայումս բունդեսլիգայում ընթանում է 6-րդ տեղում: Գերմանական ակումբը մտել է չեմպիոնների լիգայի 1/8 եզրափակիչ, որտեղ մրցելու է «Գալաթասարայի» հետ:

Ֆիլիպ Տիմովն «Իմպուլսում» հանդես է գալիս անցած մրցաշրջանի սկզբից: Նա մինչ այդ խաղում էր Սլովենիայի բարձրագույն խմբի «Կոպերում»: Տիմովը հանդես է եկել Մակեդոնիայի պատանեկան եւ երիտասարդական հավաքականներում: Նրանով հետաքրքրվում են եվրոպական մի քանի թիմեր:

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# Ամլությունը բուժելի հիվանդություն է



Ամբողջ աշխարհում երեխաներ չունենալու պատճառով ամուսնացած զույգերի 15 տոկոսը դիմում է բժիշկների օգնությանը, նրանց մի մասը բուժվում է, սակայն 5 տոկոսը մնում է անպտուղ: Այս վիճակագրությունից Հայաստանը զերծ չէ, սակայն կոնկրետ տվյալներ, թե Հայաստանում, բնակչության թվի համեմատությամբ, որքա՞ն ընտանիքներ են կանգնած անպտղության ու ամլության խնդրի առաջ, դեռեւս չունենք: Մեկ այլ վիճակագրությամբ՝ շուրջ 50 տոկոս դեպքերում երեխա չունենալու պատճառը տղամարդն է, սակայն Հայաստանում տղամարդու ամլության գործոնը, ելնելով մեր մենթալիտետից, հաճախ բացառում են ու ամբողջ «մեղքը գցում» կնոջ վրա: Սակայն սերունդը պահպանելու համար կնոջը մեղադրելու փոխարեն հարկավոր է, որ տղամարդիկ եւս հոժարակամ գնան հետազոտման ու բուժման, չնայած վերջին երկու տարիներին հետազոտման գնացող եւ ամլության խնդրով անհանգստացող տղամարդկանց թիվն ավելացել է:

«Ցիտո» ախտորոշիչ կենտրոնի լաբորատոր ծառայության ղեկավար **Անահիտ Պետրոսյանը**, հաշվի առնելով կոնկրետ «Ցիտո» կենտրոնի փորձը, ասում է, որ վերջին 2 տարիներին ամլության խնդրով իրենց դիմողներն ավելացել են: Բայց երբեմն տղամարդիկ այնքան ուշ են գնում հետազոտման, որ բուժման համար էլ ուշ է լինում:

Անահիտ Պետրոսյանի փոխանցմամբ՝ հետազոտման համար տղամարդիկ իրենց դիմում են սկսած 25 տարեկանից, կանայք՝ 19 տարեկանից:

### Ամլության պատճառները

Տղամարդկանց ամլության հասցնող գործոնները տարբեր են՝ արտագնա աշխատանքը, որտեղից վերադառնում են սեռավարակներով, շրջակա միջավայրի աղտոտվածությունը, հատկապես արտանետված ծանր մետաղների ազդեցությունը, սթրեսներն ու նյարդային համակարգի խանգարումները:

Կապված ծանր մետաղների հետ՝ Անահիտ Պետրոսյանը նշում է, որ օդն աղտոտող ծանր մետաղներ արտանետում են հատկապես պղնձամոլիբդենային կոմբինատները:

Չնայած հայաստանյան մասնագետները չունեն ցուցանիշներ ծանր մետաղների պատճառով ամլության առաջացման, սակայն համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ ծանր մետաղները եւս տանում են ամլության: «Իսկ նման հետազոտությունը պղնձամոլիբդենային կոմբինատի տիրոջը ձեռնտու չէ, եւ մեր առողջապահության նախարարությունը իրականացնել չի կարող», երեկվա ասուլիսի ժամանակ ասաց Անահիտ Պետրոսյանը, ըստ որի՝ իրենց դիմող տղամարդկանց մեջ նկատվում է նաեւ սերմի որակի անկում, այսինքն՝ նման որակի սերմը բեղմնավորել չի կարողանում:

Սերմի որակի վատթարացման կարող են հանգեցնել տարբեր տեսակի վնասվածքները, վիրահատությունները, հատկապես մայրաքաղաքում անընդհատ ընթացող շինարարությունները, որոնք աղտոտում են միջավայրը, ալկոհոլի չարաշահումը, թմրանյութերը, մրսելը, մինչեւ անգամ սնունդը, չնայած սննդացանկը փոխելով հնարավոր է վերականգնել սերմի որակը:

Վ. Ավագյանի անվան բուժկենտրոնի անդրոլոգիայի ծառայության ղեկավար **Գեւորգ Գրիգորյանն** ավելացնում է, որ մրսածությունը կարող է հանգեցնել շագանակագեղձի բորբոքման, սեռական անկարողության ու մինչեւ սերմի որակի անկման:

Բազմազան սեռավարակները Հայաստանում եւս տարածված են, ինչի պատճառը, ըստ Անահիտ Պետրոսյանի, բնակչության անտեղյակությունն է, ավելի ճիշտ՝ տգիտությունը: Հայ տղամարդիկ հատկապես արտագնա աշխատանքից հետո վերադառնում են սեռավարակներով, որոնք եւս ամլության ու սեռական մասնակի անկարողության տանող գործոններ են:

### Ամլության բուժումն ու կանխարգելումը

Բուժման ձեւերը լինում են դեղորայքային, վիրաբուժական, անգամ կենսակերպի ու սննդակարգի փոփոխությունը կարող է բուժել ամլությունը: Բայց բուժման թվարկված մեթոդները կիրառվում են կախված հիվանդության պատճառներից ու բարդության աստիճանից:

Ուրոլոգ Գեւորգ Գրիգորյանը նշում է՝ նույնիսկ եղել են դեպքեր, երբ կարիք է եղել, որ տղամարդու հետ աշխատեն հոգեբանները կամ հոգեթերապեւտները, որովհետեւ սթրեսներից ստացված սեռական խանգարումները բուժելը հաճախ դառնում է հոգեթերապեւտի գործը:

Իսկ ամլությունը կանխարգելելու համար ուրոլոգը տղամարդկանց խորհուրդ է տալիս պահել առողջ ապրելակերպով, գնալ պրոֆիլակտիկ ստուգումների եւ չչարաշահել վնասակար սովորությունները:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

# Քիմիական արդյունաբերությունը կա եւ աշխատում է

## *Ցուցահանդես Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանում*

Հայաստանի քիմիական արդյունաբերության ձեռնարկությունների արտադրանքի ցուցահանդեսը երեկ բացվեց Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանում: Այն իր բնույթով նորություն էր, քանի որ մինչ այժմ կազմակերպվող ցուցահանդեսները ներկայացնում էին Հայաստանի տնտեսության այլ ոլորտները: Մինդեռ այս անգամ ճարտարագիտական համալսարանի շենքում ներկայացված էին քիմիական, այդ թվում՝ դեղագործական, հին ու նոր մոտ 50 ընկերություններ՝ ոլորտի ամենահայտնի ձեռնարկություն «Նաիրիտը», կենցաղային քիմիայի գործարանը, «Լիզինը», մարտկոցների արտադրության «Էլբատ» գործարանը, ապակյա տարաների արտադրության «Սարանիստը», ֆիլտրող նյութեր արտադրող «Դիատոմիտը», դեղերի արտադրության «Արփիմեդ», «Լիկվոր», «Վիտամաքս», «Բիոթերմ» ընկերությունները եւ ուրիշներ:

Ցուցահանդեսի նպատակն էր իրազեկել հանրությանը այս ճյուղի գործունեության մասին, ծանոթացնել թողարկվող արտադրանքին եւ ոլորտի զարգացումներին: Այս ամենի մասին լրագրողների հետ զրույցում առավել մանրամասն ասաց համալսարանի ռեկտոր **Արա Ավետիսյանը**: Նրա հավաստիացմամբ՝ ցուցահանդեսը կօգնի ոչ միայն քիմիական արդյունաբերությանը, այլեւ այն մասնագետներին, ովքեր ցանկանում են աշխատել այս ճյուղի ձեռնարկություններում: Ռեկտորը տեղեկացրեց, որ տարեկան 70 մասնագետներ են ավարտում ճարտարագիտական համալսարանը՝ բակալավրեր եւ մագիստրոսներ:

«Հասարակության մեջ տարածված է, որ մեր քիմիական արդյունաբերությունը չի գործում, մեր նպատակն է ցույց տալ, որ այս ոլորտը կա եւ աշխատում է», ասաց Արա Ավետիսյանը: Նա նաեւ տեղեկացրեց, որ եկող տարվանից կգործի համալսարանի կայքը, որտեղ ոլորտի աշխատանք փնտրող մասնագետները կգտնեն գործատուներին:

Առաջիկայում նախատեսվում է նաեւ այլ ոլորտների ընկերությունների արտադրանքը ներկայացնող ցուցահանդեսներ կազմակերպել՝ տեղեկատվական տեխնոլոգիաներ, էներգետիկա, էլեկտրատեխնիկա եւ այլն:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄ

# Երեւանում 46 հազար, իսկ Մոսկվայում 25 հազար գլխաքանակ թափառող կենդանինե՞ր

«Փրկենք կենդանիներին» հասարակական բարեգործական կազմակերպության անդամ **Արման Էլբակյանը** երեկ «**Ազգի**» հետ զրույցում ասաց, որ դիմել են տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովին քաղաքապետարանի կողմից Երեւանում թափառող կենդանիների վնասազերծման համար հայտարարվող մրցույթի պայմանների վերանայման եւ փոփոխության նպատակով:

Ըստ հայցադիմումի՝ բողոքարկվել է 2013թ. քաղաքապետարանի ներկայացրած մրցույթը, որն անցկացվում է պետական գնումների կոմիտեի կողմից՝ քաղաքապետարանի կարիքների համար թափառող կենդանիների ծառայություն ձեռք բերելու նպատակով:

«Մենք համաձայն չենք մրցույթի պայմաններին, քանի որ նրանում կան մի շարք կասկածելի եւ օրենսդրությանը հակասող դրույթներ, եւ ինչպես մեր, այնպես էլ մի շարք կազմակերպություններ ցանկության դեպքում էլ չեն կարող մասնակցել մրցույթին, քանի որ պայմանները խտրական են: Մենք բողոքարկել ենք մրցույթի պայմանները՝ խնդրելով չեղյալ համարել անցկացված մրցույթը, մինչեւ պայմանների համապատասխանեցումը ՀՀ օրենսդրությանը եւ դրանց գիտական հիմնավորումներին, մասնավորապես այն դրույթները, որոնք հակասում են»,- ասաց Ա. Էլբակյանը:

Ինչպես ասաց Ա. Էլբակյանը, Երեւանի քաղաքապետարանի մրցույթի պայմանների համաձայն, տարեկան պետք է գործողություն իրականացվի 46 հազար թափառող կենդանու նկատմամբ, եւ այդ թիվը վերջին երեք տարիների ընթացքում չի փոխվում. «Տնտեսվարող սուբյեկտները չեն կարող մասնակցել այս մրցույթին, քանի որ թափառող կենդանիների թվերը իրատեսական չեն, հնարավոր չէ իրականացնել: Երեւանում չկա նման գլխաքանակի կենդանի, եւ քաղաքապետարանը չի հիմնավորել, թե ինչո՞ւ հենց այդքան գլխաքանակ, որի թիվը տարիներ շարունակ չի փոխվում»:




Ա. Էլբակյանը, համեմատական անցկացնելով Ռուսաստանի Դաշնության հետ, ասաց, որ ըստ այնտեղի Գիտությունների ակադեմիայի էկոլոգիայի եւ էվոլուցիայի ինստիտուտի տվյալների՝ Մոսկվայում առկա է 25 հազար գլխաքանակ շուն. «Չցանկանալով համեմատել Երեւանի եւ Մոսկվայի չափերը, հասկանալի է դառնում, որ չենք կարող հավատալ 46 հազար գլխաքանակին»:

Անդրադառնալով «Փրկենք կենդանիներին» ՀԿ-ի առջեւ ծառացած խնդիրներին՝ Ա. Էլբակյանը նշեց նաեւ, որ եթե նույնիսկ իրենց կազմակերպությունը հաղթեր մրցույթը, չէր կարողանա իրականացնել նման ծավալի աշխատանք: Իսկ ըստ մրցույթի պայմանների՝ հայտ ներկայացնող կազմակերպությունները դիմումը ներկայացնելուց առաջ առնվազն երեք տարի պետք է պաշտած ձեւով իրականացրած լինեն համանման առնվազն մեկ պայմանագիր:

Ա. Էլբակյանն ասաց նաեւ, որ գուցե իրատեսական եւ ընդունելի լիներ 3 տարվա աշխատանքային փորձը այլ տեսակի գործունեության դեպքում, սակայն թափառող կենդանիների վնասազերծման գործընթացով ոչ մի կազմակերպություն իրենքնաբերաբար չի զբաղվում: Նման ծառայությունով զբաղվում են բացառապես տեղական ինքնակառավարման մարմինների պատվերով:

ՏՄՊՊՀ-ում որոշեցին հավելյալ ուսումնասիրություններ կատարել:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

Հարգելի՛ գործընկերներ,

Վաղը՝ փետրվարի 12-ին, ժամը 12:00-ին, ՀՀ Մշակույթի նախարարությունում կկայանա մամլո ասուլիս, որի ընթացքում նախարար Հասմիկ Պողոսյանը եւ ՎիվաՍել-ՄՏՍ ընկերության գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը կներկայացնեն 2012թ-ին համատեղ իրականացրած եւ համագործակցության շրջանակներում՝ 2013թ-ին նախատեսվող ծրագրերը:




ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 11.2.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: